

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՄԻՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խւարքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Մարտունակներ. Վերջին տեղեկութիւններ.
Տեղեկութիւններ դաւաճողներ. Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Ուր գնան և ուր գիմեն. զանգեղուրի
գրութիւնը. Բաղուածքներ մամուլից. Օգնու-
թիւն հայ աղետաւորներին. Դրութիւնը Երեւա-
նում. Նամակ Հին-Նախիջևանից Ներքին լու-
րեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բուլղարահայ
գաղութը. Նամակ Պարսկաստանից. —Հեռու-
գիրներ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մ Ս Ք Ս Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

Վերջացել է արեւոյ ճիւղը շրջանը թէ
նա դեռ հաշիւներ ունի հասարակութեան
հետ: Արեւոյ ներկայ անցողական շրջ-
անը չէ եւթարկվելու սուր ցնցումների
և տարուբերումների: Ի՞նչ գիշեր պէտք է
բռնել գէպի կառավարչական նոր փոփո-
խութիւնները և գէպի գործող կազմա-
կերպութիւնները:

Այս ամիս հարցերը, որոնք ամենօրեայ
խօսակցութեան նիւթ են և հետաքրքրու-
թեան առարկայ հասարակութեան զա-
նազան խաւերում:

Հին և նոր շրջանի մէջ կանգնած է
բարձրագոյն մանիֆէստը, որ պարունա-
կում է իր մէջ խոստումներ մտցնելու լաւ
սահմանադրական կարգեր պետութեան
բոլոր մասերում:

Բայց կառավարմանը չեն հաւա-
տում, որ մանիֆէստը անմիջապէս գոր-
ծադրութիւն կը ստանայ կենսաբ. մէջ, ու-
րովհետեւ երկիւղ են կրում թէ հին բե-
թիւի գործողները ամեն միջոց գործ կը
դնեն խանգարելու և չքացնելու նրա գոր-
ծադրութիւնը: Ուրեմն այդպէս երկիւղ
է յայտնվում, որ Մանիֆէստի տրված
հիմնական առանձնաշնորհումների բաղդը
գեո զրականապէս ապահովված չէ:

Սակայն միւս կողմից արմատական և
ծայրայեղ պահանջ ունեցողները ամենե-
ւին չեն ուզում բաւականապէս Մանի-
ֆէստի տուած արտօնութիւններով և
պահանջ են յայտնում, որ բարեկամութեան
թիւնները արվեն աւելի լայն ու ընդար-
ձակ կերպով և միանգամից լուծեն նոր
իրաւակարգ ստեղծելու հարցը:

Անկասկած է, որ իւրաքանչիւր մարդ
կը ցանկանար տեսնել իրագործված ա-
մենադիպական կարգեր կենսաբ. մէջ
և անշուշտ համակրութեամբ կը վերա-
բերվէր ամենաարմատական ծրագիրնե-
րին, բայց ներկայումս գրված է ոչ մի-
այն ակադեմիական տեսական, այլ գործ-
նական մի հարց, այն է թէ ինչպէս կա-
րողանանք Ռուսաստանի ներկայ պայ-
մաններում ստանալ այն լաւագոյնը, որ
հնարաւոր է ստանալ:

Այդ պատճառով հարցի քննութեան և
գործնական դիրքեր գրաւելու ժամանակ
պէտք է աչքի առաջ ունենալ հնարաւոր-
ութեան սահմանը: Շատ զբաւիչ են
սօցիալական հասարակապետութեան կամ
ռուսական միացեալ նահանգներ կազմե-
լու տեսնալքները, սակայն ներկայումս
մենք չենք զննում այդ ծրագիրները իր-
ըն գործնական ծրագիրներ մեր օրերի
համար և նրանց համար մաքսում ու
կուր միջոց չենք սկսում:

Այն ծրագիրը, որ սահմանադրա-
կան-ռազմական արեւելան անունով ա-
ռաջ է եկել և հաւանականութիւն է
գտել մեր կողմից և, լրացուցիչ յօ-
դուածներ է կարօտ, իսկ ապագայում
աւելի խոշոր կատարելութիւնների, բայց
ներկայումս եթէ նա իրագործվի, մենք
կը համարենք մեծ առաջադիմութիւն և
թանկագին մի ստացում:

Իսկ ինչպէս անենք, որ բեկեղեկան, որ

յետաշարժ ձգտումները մեզ յետ չը տա-
նեն և չը եղծեն նաև մեր յիշած ծրա-
գիրը:

ՎԵՐՋԻՆ ՏԵՆԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Համարեա թէ ամեն օր Հին-Նախիջև-
անի գաւառի հիւսիսային մասում մի
արեւոյի գէպը է պատահում. օր չի
անցնում, որ ժողովուրդը չը յուզվի և
մտքերը չը խռովեն: Քանի Չահուլի նախ-
կին տանուէր Աբաւ-Չալ-օղլին բան-
տուէն էր գտնվում, գաւառի այդ մա-
սում փոքր ինչ հանգստութիւն էր տի-
րում, բայց երբ այդ յիշեալ չարագործը
ազմիրապետացիայի կողմից արդար ձա-
նաչվեց և բանտից դուրս եկաւ, ընդա-
րուները և կողոպտաները նորից վեր-
սկսվեցին: Արեւոյ արդարութիւնը մինչև
էրբ պէտք է անաբգվի և բռնադատվի
այդ գործարար Չահուլի գաւառամասում...
Աստուծուն է միայն յայտնի:

Այսօր Չահուլի գիւղից եկող Սո. Սող-
անունով մի հայ մեզ հետեւան է պատ-
մում Հին-Նախիջևանի թուրքերի քաջա-
գործութիւնների մասին:

Հոկտեմբերի 31-ին Չահուլի գիւղի
քահանայ Տէր-Յովակիմը իր հինգ հա-
մագիւղացիների հետ Նախիջևանում տան
համար պիտոյքներ առնելուց յետոյ՝ Երե-
ւոյեան պահուն վերադառնում են Չահա-
բերդ: Չահուլի գիւղից անցնող ճանապարհ-
նէին թուրքաբնակ Սուլտո գիւղի միջով,
գնաբերդցիներից մէկը իր զինքներից
յետ է մնացել: Առաջից գնացող գնա-
բերդցիներին Սուլտոն թուրքերը շրջա-
պատում են և նրանց կողոպտելուց յե-
տոյ գերի են պահում իրանց մօտ: Ըն-
կերներից յետ մնացող գնաբերդցիներ, երբ
գիւղից իրարանցումները ձայն է լսում,
գիւղը չէ մտնում և խոտոր ճանապարհ-
ներով փախչում է և հաւար գցում Չահա-
բերդ գիւղը: Չահուլից գիւղերը գնված
վրա են հասնում, պաշարում են Սուլտո
գիւղը և ուլտիմատում առաջարկում
թուրքերին. կամ յետ տալ գերիներին
իրանց ունեցածով, կամ թէ գիւղը պէտք
է աւերեն: Թուրքերը բաց են թողնում
գերիներին իրանց երկու գէնքով միայն,
իսկ երեք գէնքի մասին սուստեցիները
բացատրում են, որ Չահուլից թուրքերն են
խլել և տարել Չահուլ:

Նոյեմբերի 1-ին հինգ սուլթանէկցի
հայեր իրանց գիւղի վեց ռուս զինուոր-
ների հակողութեան տակ Նախիջևանում
իրանց տան համար անհրաժեշտ պիտոյք-
ներ առնելուց յետոյ վերադառնում են
Սուլթան-բէկի ճանապարհին Փայիզ թուր-
քաբնակ գիւղի մօտ նրանց վրա յարձակ-
վում են 60 զինված թուրքեր, զազանա-
բար սպանում են 4 հայի (իսկ մէկը
փախչում է), բոլորովին մերկացնում և
զինաթափ են անում զինուորներին, որոնց
հրամայված է եղել «գէնք չը գործածել
թուրքերի դէմ»: Զինուորները այդ գրու-
թեան մէջ գալիս են Չահուլ և յայտնում
օֆիցեր Մախլախիին. վերջինս իսկոյն և
եթ մի քանի կողակ է ուղարկում աղէտի
վայրը, իսկ ինքը մի վաշտ զօրքով յե-
տոյ է դուրս գալիս գիւղից: Առաջից
գնացող կողակները Փայիզի մօտ ընհար-
վում են թուրքերի հետ, սպանում են
վեց թուրք և յետ խլում 3 մօսինի հրա-
ցան. սպանվող թուրքերից մէկը Չահուլից
մի յայտնի չարագործ է լինում, երկուսը
փայիզցի, իսկ միւսները զանազան գիւ-
ղերից: Յետեւից գնացող զինուորները պէտք
է պաշարելին Փայիզ գիւղը և առաջար-
կելին յետ տալ զինուորներին խլած գէն-
քերը, իսկ եթէ թուրքերը չը լսէին,
գիւղը պիտի խլատ խուզարկութեան են-
թարկվէր: Արեւոյ այդ երկուսից մը տե-

ղի ունեցաւ, Չահուլից պատմողին յայտնի
չէ եղել: Շատ ճիշտ իրողութիւն է, որ
Չահուլի գաւառամասում տեղի ունեցած
ընդհարումները և կողոպտաները միշտ
նախաձեռնում են Չահուլից անհանգիստ
թուրքերը, որոնց հանգստացնելու համար
անհրաժեշտ է վճարել մի հարկած
հասցնել:

ԳՈՒՆԻ

Գանձակի նահանգապետը Նոյեմբերի
3-ին գեղուցեց Կովկասի ոստիկանու-
թեան կառավարչին, որ «Новое Время»
լրագրի № 10642-ում «Կովկասում» վեր-
նագրով բաժնում ապավո Պետերբուրգի
հեռագրական գործակալութեան հետա-
գիրը Թիֆլիսից հետեւեալ բովանդակու-
թեամբ, սուտ է. «Ձերբայելում հոկտ. 22-ին
հայրենասիրական կուսակցութեան թա-
փօրի ժամանակ ուսմբեր գիւղացիներ ցու-
ցարարների վրա և հրաձգութիւններ ե-
ղան հայերի տները և խանութները: Սպանված են շատ հայեր, որոնց թոււմ
քահանայն իր տիրացուով, որոնք թաղ-
ման էին եղել: Այդ բանը իմանալով, ես
խաղչն հեռագրով հարցրի գաւառապե-
տին, որը այժմ հեռագրով գեղու-
ցեց ինձ, որ Ձերբայելում ուսմբեր
չեն գցել, ոչինչ ցուցարարներ չը կային,
լրագրական տեղեկութիւնը չարամիտ
սուտ է: Ամեն ինչ հանգիստ է»:

ՏԵՆԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆԱՌՈՒՅ

Հարուր, հոկտեմբերի 20-ին: Միւլքադար
գիւղը գտնվում է Ձերբայելից երկու ժամվայ
ճանապարհ հեռաւորութեան վրա Դիզա-
փայի լեռնաշղթան տանող ուղղութեամբ:
Նա մեծ գիւղ չէ, ընդամենը 50—60 տուն,
ունի բնական ամրու դիրք, ինչպիսին, առհա-
սարակ, ինձնակամ է հայ գիւղերին: Այդ
գիւղը, ինչ պէս և ուրիշ շատ հայ գիւղեր,
քիչ չէ տուփել այս տարի իր մշտական հա-
րեան քրովաներից. բնկած տեղը չեն խնայել
այդ քրովաները միւլքադարցիների տա-
նակներով տաւարը քշել, մենատու մարդ-
կանց գէնքերը խլել և այլն: Այդ ամենը տա-
նում է միւլքադարցիներ, բայց ամսի 16-ին
քրովաների կողմից արած առաջարկութիւնը
կատարեցեց գիւղացուն և նա գէնքը ձեռքին,
համբերութիւնը հատած, դուրս եկաւ պաշտ-
պանելու իր պատիւը, իր կնոջ և աղջկայ
պատիւը:

Այդ օրը թուրքերի մի զինված խումբ գա-
լով միւլքադարցիների հանդը դիմում է տա-
ւարաբաններին ասելով—գնացէ՛ք գիւղը, ա-
սացէ՛ք, որ այն ինչ մարդու հանգը, և այն ինչ-
չի աղջիկը բերեն մեզ համար հախառակ դէպ-
քում մեզանից ձեզ հանգստութիւն չի լի-
նի, ասում են և մի քանի անգամ հրացան են
պարպում: Դուրս է գալիս միւլքադարցիներ
քրովին պատասխանելու և գնդակի փոխարէն
գնդակով է պատասխանում: Միւլքադարի լեռ-
նութեամբ մօսինի և բերդանի հարկաւոր մա-
հաւէտ գնդակները մի մեծ խաղ են սկսում
խաղալ: Գիւղի արեւմտեան կողմը գտնվող
սեպաձեւ ծայրերի գաղաթներից իրանց շեշ-
տակի հարուածներով հայերն են մահ սպա-
նում թաղանաժարա քրովաներին, իսկ հա-
կառակ կողմից, վաղօրօք պատրաստած դի-
քերից, թուրքերն են գնդակներ ուղարկում
յանդուզն հայերին, հազար ու մի տեսակ հայ-
հոյանքներով: Օրը սահուն է, երկու կողմերին
էլ օգնութեան են հասնում իրանց հաւատա-
կիցները: Չը նայած, որ կուր ձայնը ամենայն
հեշտութեամբ հասնում է Ձերբայել, ուր գա-
ւառապետն է լինում, բայց և այնպէս Հադ-
րուլ աւանից հարկաւոր են համարում հեռա-
գրով խնայ տալ գաւառապետին դէպքի մասին:
Այդ լինում է հոկտ. 16-ին կէս օրին մօտ: Օրը
մթնում է, աստղերը փայլում են, մութը կո-
խում է երկրիւր, բայց Միւլքադարի ձորերում
և քարայրներում լսելի են լինում գեո հրա-

ցանների ձայնը: Այդ օրը երկու կողմե-
րից էլ մարդկային զոհ չէ լինում: Թուրքերը
իրանց պահանջի մէջ մեղմանում են. կանանց
փոխարէն նրանք միայն 200 ռ. են պահան-
ջում: Ոչ ոք չէ միջամտում այդ ամենին վերջ
տալու համար:

Բացվում է հետեւեալ օրը հրացանների ու-
րտաներով. կուր վերսկսվում է, բայց ոչ ե-
րէկվայ տեղը: Հայերին աջակցել էր դուրս
քշել թուրքերին իրանց սահմաններից, հաղա-
ծել նրանց նոյն իսկ իրանց զլաղներից:
Թուրքերից մի քանի մարդ գնդակահար էին
եղել: Կէս օրվայ մօտ էր: Կուրը շարունակ-
վում էր իր գործութեան ամբողջ թափով: Զիւր-
բայելից Միւլքադար բերող ճանապարհով մի
երկար սե գիծ կամաց-կամաց շարվում էր:
Գիծը բարձրացաւ, մօտեցաւ. դա կօղակների
մի երկար, երկար շարան էր: Գալիս էր այդ
շարանը գաւառապետի և օֆիցերի ուղեկցու-
թեամբ: Գալիս էր նա կամաց-կամաց գրուցե-
լով, կատարելու անկող, կարծես դուստրճա-
լու գնալիս լինէին: Եկան, մօտեցան և անմի-
ջապէս ինքն իրան ամբողջ զօր վրա կուր
դադարեց: Մի քանի թուրք գիւղակներ, վախե-
ցած գէնքեր, դանդաղ դառած երկու հարեան-
ներ, այդ էր նրանց տեսածը, միթաւրակա-
ն ոչ մի բան: Նայեցին, հայերին մեղաւոր դը-
տան, երկի նրա համար, որ կարողացել էին
հաղաւթ իրանց վրա յարձակվողներին, և յետ
դարձան գնացին: Այս ամիս է Միւլքադար գիւ-
ղի ամսի 16-ի կուր պատմութիւնը, հեռա-
ւոր հետաքրքրվող եղբայրներ:

Լ. Հայրապետեան

Փարսի, 12 հոկտեմբերի: Այս գիւղը, շրջա-
պատված լինելով թուրքաբնակ գիւղերով,
բաւականին վտանգաւոր տեղ է: Այս բանը
լաւ գիտեն իրանք փարսիցիք և ամեն կերպ
աշխատում են գիմարել գիւղը յարձակման
ենթարկելու դէպքում:

Բայց արի ու տես, որ մեր ոստիկանու-
թեանը հաճելի չէ, որ գիւղացին ունենայ
ինքնապաշտպանութեան միջոցներ: Մէկ էլ
տեսար գիւղում լայն ընկաւ պրիստաւը և
սկսեց խուզարկութեան ենթարկել գիւղացի-
ներին տները՝ սարսափ աղղկով կանանց և ե-
րեխաներին: Այսպիսի մի բան պատահեց և-
րէկ մեր գիւղում. խուզարկողը ոչինչ չը գը-
տաւ, բացի մի երկու դատարկ պտուղտաշից
և կէս պուղ վառօղից: Բայց զբաղով ամեն
բան չը վերջացաւ. պրիստաւը գիւղից դուրս
գալովց ասաջ հրամայում է, որ միւս օրը ի-
րան ներկայանան այն անձներ, որոնց աները
ինքը խուզարկել է: Ի՞նչ արած, թողնելով ի-
րանց գործը, գիւղացիք միւս օրը շտապում
են Աշտարակ պրիստաւի մօտ: Բանից
դուրս է գալիս, որ պրիստաւը խուզար-
կութեան ժամանակ անհամեստութիւն չէ հա-
մարում նայել գիւղականներին փողի բխա-
ները, մէկը մէջ լինում է 3—4 հարկը մա-
նէթ: Կանչել տալով գիւղացիներին իր մօտ, նա
սկսում է սպառնալքներ կարգալ յիշեալ քի-
սայի տիրոջ գլխին, ասելով, որ նա է եղել
փարսիցի չորս թուրքերի կորստեան պատ-
ճառը (սրա մասին իր ժամանակին գրել եմ):
Այդ զրգարութիւնից գիւղացին ազատվում
է 45 ռուբլի տուգանք տալով պրիստաւին...:

Ինչպէս պատմում են գիւղացիք, այս պրիս-
տաւը, որը ի մեծ ուրախութիւն գիւղացիների
հետանալու է — պատմական տուգանքներ
վերցնող է: Մէկը զարմանում ենք թէ
ինչու պէտք է անմեղները տուփեն, իսկ չա-
րագործները քաջակրկին ու խրախուժվեն, և
մինչև երբ...

Գիւղական

Տող գիւղ (Շուշու գաւառ), հոկտեմբերի
19-ին. Տող գիւղում հայերի հետ ապրում են
50 տուն թուրք բնիկ. այդ բնիկը Մեղիւ-
Ապառնիների և Մէլիւ-Եղանօյների տոհմից
են: Առաջիններից մէկը՝ Փուրուղում-բէկ Մէ-
լիւ-Ապառնի, ամսի 13-ին գողանալով իր
բարեկամի հինգ հարուածանի հրացանը, փա-

խառնական է դառնում գիւղիցս. երկրորդ օրը քուժում տանում է մօտիկ Տուժմ գիւղի 6 տա-ւարը: Իսկ 16-ին գիւղի երկրասարքներից մէկը իր 18 տարեկան քրոջ հետ գիւղից դուրս, անտառի ծայրում զբօսնելիս, փախըս-տականը դիտաւորութիւն ունենալով պատա-նուն սպանել և գիւղիս կայծի նշոյլները հըր-դենի փոխարինել, արձակում է հրացանից գնդակ, բայց գնդակը դիպչում է անմեղ օ-րիորդին. իսկոյն աղջիկը գնդակի անեղ հա-րուածից մեռնում է: Գիւղից հասնում է օ-ֆիցէրը կօզակների հետ՝ բայց չէ գտնվում չարագործը:

Տէր Աստուած, այս Մելիք-Ասլանօֆները ինչ չար պատուհաս դառան մեր խեղճ հայերի համար: Մէկը, այսինքն Սադըլը, Միքէլի գիւղից իր կողմից յետոյ, իր արքանեակ-ներով դառնում է Ղարաբուլաղ կայարանը, որտեղ գազանների և չար ոգիների որջանոց է, և իր նեղ գործերն է շարունակում: Մի ուրիշը Տուժմ գիւղի հայ երիտասարդին կա-շարանում սպանելով, փողերն է տանում: Նորման և Շաշարէզ Մէլիք-Ասլանօֆները նոյնպէս կայարանում ձակաւորների թողած հայերի խնամութեան են կողոպտում. և անա այսօր չար դիտաւորութեամբ գիւղի ծայրում հայ օրիորդ սպանում:

Ա. Յով.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՐ ԳՆԱՆ ԵՒ ՈՒՄ ԴԻՄԵՆ
(Նամակ Բագուից)

Նախարարներդները հասան իրանց նը-պատակին. կառավարութիւնը յարգեց նրանց խնդիրը, միջոց տուեց և նրանք սրտի ամե-նայն հանգստութեամբ վերական են իրանց գործերը ու մի տեսչային արագութեամբ վիշ-կանքի է՝ որ կանգնեցնում են, արհեստանոց-ներ է՝ որ նորոգում են:

Սակայն մի բան: Օգոստոսեան օրերից յետոյ քանի-քանի անգամ ժողովներ տեղի ունեցան թէ՛ այստեղ, Բագում և թէ՛ Պետերբուրգում, առաջարկվե-ցին շատ ու շատ պահանջներ, լուսարանվե-ցին ու լուծուան ստացան շատ խնդիրներ, սա-կայն ամեն տեղ և ամեն ժամանակ մնաց մո-նացութեան մասնավոր մի խնդիր, որը ոչ պակաս կարևոր էր այն մի շարք պահանջ-ների կարգի մէջ դասելու:

Միջանկեալ ասեմ, որ եթէ մինչև այսօր այդ խնդրի «մոնացութեան մասնակիւն» ա-սիթով չէ եղել ոչ մի խօսք, այն իսկ հասա-րակ պատճառով է, որ բոլոր այն մարդիկ, որոնք անցել են օգոստոսեան ստորագրութե-րովից, այն համոզմունքն ու հաւատն են ու-նեցել, թէ ժողովներում զրկած խնդիրները, պահանջները—ինչ կերպ էլ որ նրանք լի-նեն—յօգուտ ընդհանուրի է: Սակայն թէ Պե-տերբուրգում տեղի ունեցող ժողովի այդ խնդրի միակողմանի լուծումը և թէ վերջին օրերս այստեղ պտուղով լուրերը՝ հաստատում են, որ այդ խնդրով շահագրգռված մարդիկ չարաչար սխալված են եղել իրանց համոզ-մունքների և ենթադրութիւնների մէջ, որով-հետև այդ խնդրին առանձին նշանաւորութեան տալու, ինչպէս նաև ժողովի նիւթ շինելու անհրաժեշտութիւն չէ զգացվել, որպէս թէ ոչ կապ ունեցող նախալին աւելանքի հետ:

Բայց իրօք այդպէս է: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Բալախա-նիում, բացի ծառայող և բանտը դասից, կա-յին նաև շատ զանազան տեսակի պարապ-մունք ունեցողներ—խանութիւններ, հաց-թուփներ, ամեն ձեւի արհեստաւորներ և այլն—որոնք, առանց մանրամասն լուսարա-նութիւնների մէջ մտնելու, կարող ենք ասել, որ կապ ունեցել են նախալին աշխարհի հետ, յենովելով հետեւեալ արամարանութեան իմաս-տին, որ այդտեղ մէկը առանց միւսի գո-յութիւն ունենալ չէր կարող:

Օգոստոսեան սարսափի և աղէտաբեր օրե-րին վերև յիշած պարապմունքի տէր մար-դիկն էլ ենթարկվել են բարբարոսային յար-ձակումների, ունեցածները մասնակի է հրդե-հի, ալան-թալանի և այսօր դրանցից հազա-րաւորները մնացել են դուրի ամեն միջոցից, դուրի, նոյն իսկ, օրվայ չոր ու ցամաք ապ-րուստից, մասնավոր կեանքի դառն ու զաղի-րակաւնութեան և, որ աւելի անտանելին է՝ ուրիշների դառնը, ուրիշների ձեռքին նայե-լիս...

Կան մարդիկ, որոնց կեանքի պատմութիւնը նմուշ կարող է ծառայել ապագայում Բալա-խանի ցատու ու չարքաշ կեցութիւնը հաս-կանալու: Եւ կան մարդիկ, որոնք տանեակ տարիներ շնչել են Բալախանու մրով շա-ղախված սպանիչ օդը, տարել են ամեն տե-սակի գրկանքներ, նեղութիւններ և նոյն իսկ հալածանքներ, մինչև կարողացել են շատ հա-մետ, շատ չափաւոր ապրուստի միջոցներ ստեղծել: Եւ այսօր այդ մարդիկ, հայկական իրակաւնութեան այս անմիջիմիջ եպօթայում, ինչ որ քմահաճ լօգիկայով՝ դուրս են շարա-վում մի կողմ, ոչ կապ ունեցողներ նախալին աւելանքի հետ:

Վերև ասացինք, որ Պետերբուրգի ժողովը խնդիրը լուծել է միակողմանի: Նա վճռել է, որ նախարարներդները իրանք տան ի-րանց ծառայողների և բանտերների վնասնե-րը: Հարց է ծագում. ապա ոչ ծառայողները և բանտերները ո՞ր դնան, ո՞ւմ դիմեն, չէ՞ որ նրանք էլ աղէտի ծովում խեղդողներն են: Ասէք, օրտեղից ստանան իրանց վնասները: Գ. Աղայեանց

ՉԱՆԳԵԶՈՒԹԻՒՆ ԴԻՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբերի 29-ին

Նահանգապետ Տակաչովիին հաշտութեան երկրորդ օրը հոկտեմբերի 22-ին, ուղևորվեց գէպի Արաքսի ափը, Կրասնոյնը, որտեղից, երեկ էլ թեքվի գէպի Աղդամ կամ Եւլախ կայարանը:

Հաշտութեանց յետոյ Գօրիս, Խնձորեակ, Գարաճուշ և Կոռնձոր գիւղերը թուրքերը ամենայն վստահութեամբ մուտք են գործում: Նրանք ծախելու են բերում փայտ, ածուխ, ցորեն և դարձ: Թուրքական մի քանի ցեղեր, (օյմաղներ) որոնք վնասել են հայերին, միանա-լով միմեկին չեն դնում հայերի գիւղեր:

Նորբա ցորեն գնելու գնացած խնձորեակե-ցիներից Ալիկալուտի թուրքերը քշել տարել են 6 ձիեր ու շորեր, թալանել և մերկաց-րել են մարդկանց ու բաց թողել: Թուրք Պրիտուս Բաշդամը, կառավարութեան հրա-մանով գնաց և եռանդուն միջոցներով դիմելով, առաւ տարած գրառութիւնը 4-ը միայն ցորե-նի շուկաները և 42 ր. 50 կ. փող, հայերից խլած: Մնացած իրեքի համար էլ պիտոտաւր խօսք է տուել մեղ հաղթանակ: Մեր գիւղա-ցիներից էլ թուրքերի մօտ գնացողներ են լի-նում. նրանց ասելով, թուրքերը նրանց գեր-կախաւորում, և սիրով են ընդունում՝ ու նոր-վում չար սերմ՝ ձգողներին, որոնց պատճա-ռով հայ և թուրք քրիստոնէրը (բարեկամները) սեղան են մնացել իրար մօտ: Նոր սիոված տար յաջարկութեան վրա ևս վստահութեամբ չէ և հայերը երբեւ կամ երբք օրից աւել չը պէտք է մնան թուրքերի մօտ:

Տիրապետական գաւառապետ Յ. Աւալիտին հետաքրքրված է և թերևս եւթեւ անցած ընթի-սաբէն:

Գաւառապետ է նշանակված պ. Տիրապետ-կօ, որի ազնիւ և անաչառ վարչութեան հա-մար մենք լրացող ենք:

Օգոստոսեան խնդրութիւնը հոկտեմբերի 22-ին ուղևորվեց Միքէլից, Գիւղերից էլ կազմինե-րի հակադրութեամբ տարվեցան մեծ քանակու-թեամբ իրեր և շորեր: Մնացած ապրուստը և թուրքերին պահ տված կահ-կարասիքը տե-ղափոխելու:

Գօրիսում, Խնձորեակում և մի քանի գիւ-ղերում բացված են հայոց եկեղեցական-ծիտ-կան դպրոցներ: Թշուառ ու խեղճ գիւղացիք իրանց հասած բոլոր զրկանքի միջոցներով թիւն թիւք երեխաներին մայրենի լեզու ու-սուցանելու մէջ որոնեն: Խաղաղ կեանքը և բացված դպրոցները մեղ նոր կեանք կարող են տալ, եթէ զարման չը ծագեն նոր աղմուկ-ներ, նոր յուզումներ:

Աղայեանց

ԳԱՂԱՍԵՆԻ ՄԱՍՈՒԹԻՒՆ

Ժընեվում հրատարակվող «Կրօնակ» հայ թերթը արդարացի դարձրել է արտապայտում այն հայ ինտելիգենտ—Ֆիլիստերների և ման-կամիտ «առաքեալների» գէտ, որոնք հետեւե-լով վրաց սօցիալ-դեմօկրատների փախչալած թէօրիսլին, աշխատում են թուրք-հայկական ընդհարումները բացատրել գաղափարագիտի-կամ անտեսական անհաւասարութեան պատ-ճառով: Առաջ ենք բերում «Դրօշակի» յօ-դուածը «Ապիկալներ» վերնագրով:

«Կովկասեան մեր թղթակիցները յաճախ իրա-ւացի զայրոյթով արձանագրում են մի եղկելի փաստ, որը մեր ներքին հիւանդոտ դրութեան, մեր մտաւոր ու բարոյական ապկարութեան նշաններից միին է: Կան ագիտատորներ, հայ անուն կրող և գիտական վարդապետութիւն-ների անունից ճառող, որոնք նորընծաներին յատուկ զօքորինեօրական նախանձախնդրու-թեամբ՝ ձգտում են հայ կեանքի բոլոր երեւոյ-թները վերածել իրանց սերտած ու դաւնած ֆորմուլներին:

Թուրք-հայկական ընդհարումների պատճառնե-րը ներանց «համոզմունքով» հայի և թուրքի սկեսաակամ անհաւասարութեան մէջ են, հայ տարրի ճնշումների մէջ, նրա նացիօնալիս-տական հակումների մէջ, և—ծ սանձարձակ յիմարութիւն—հայ յեղափոխական կազմա-կերպութեան ազգային ոգով պրօպագանդի մէջ:

Եւ այդ անգուստ նօֆիտները, գիտութեան ու անաչառութեան ծիրանի հագած, պանիս-լամիտալիս արժանի եռանդով, առանց խղճա-հարկելու, քարոզում են հայ շրջաններին, ո-րոնք ի վերջոյ յանգում են այն եղբակացու-թեան՝ որ հայն ու թուրքը նաւաւարապիս յանցաւոր են յայտնում Պետերբուրգի և իս-լամական վիժմունքների յարուցած եղեռնի մէջ...

Երբ այդպիսի յայտարարութիւններ անում են բարոյապէս իսպառ ապականած, քննելու և շոյելու արհեստի մէջ վարժած հայ «ինտե-լիգենտ»-ֆիլիստերները,— դա մեղ չէ զար-մացում և չէ վրդովում. հասարակութիւնը ճանաչում է նրանց և գիտէ՝ ըստ արժանոյն գնահատել նրանց աղտոտութիւնները: Բայց երբ այդ տեսակ աշխարհիկ մտքերի քարոզող են յայտնում գաղափարական կուսակցու-թիւնների ներկայացուցիչները—մենք պէտք է բոլոր ուժով պայքարենք նրանց դէմ և ազգարարները հայ ժողովրդին, որ նրանք կեղ-ծում են ճշմարտութիւնը, խեղաթիւրում են առանց այն էլ վերաւոր պրտերը—գիտու-թեան այդ մեծախօս առաքեալները մոռանում են, որ իրանց ընթացքով, անտեսական թէօ-րիսլանքի անհեղիք ու անհեթեթ կիրառումնե-րով, անգիտակցաբար վարագործում են ոճիրը, քրգաբացում ու խրախուսում են թուրքա-կան Գրուշովաներին և բերօղբաթախի հայա-տեաց ծառաներին, որոնք հէնց սկզբից, աղէտ-ներին տեսելով օրերից՝ ծանուցանում էին ի լուր աշխարհի, թէ սուտ է, որ թուրք առարկը լարել է իշխանութեան կողմից հայերի դէմ, սուտ է, որ մասնէրական խռովանք առաջինն է սկսել գիւղած յարձակումներն ու լանկեթա-մուրակաւ գաղափարութիւնները,— այդ թէ կան անտեսական խռովումի պատճառներ, որոնք բոլորեք են թուրքի գոգնութիւն ևս աստ լուծիւնը հայ ազգաբնակչութեան դէմ, և թէ այդ վերջինը, անուշաղբ, նոյնքան յանցաւոր է, որքան իր կոշտ ու վայրագ դրացին...

Անտ գլուխ, ցաւազգին իրողութիւն: Մեր այդ մանկամիտ «առաքեալները» յաճուն ինչ որ մեծաթիֆիլիստական արդարութեան ու անա-չառութեան, յաճախ օրիգինալ երեւոյն հա-մար, աւելի յաճախ «Գաշնակցութեան» գոր-ծունէութեանը խանդաբերու տննչով պատ-րաստ են աչք գոցել մասնագիտական ամբիսի հանրածանօթ առանձնաշարաւորութիւնների առ-ջև, աշտարաստ են անգիտանալ նրա մարդա-պան ու կուլտուրապան հակումները, որոնք այնքան աւելի է կերպով անդրադարձել են մանաւանդ հայութեան ճակատագրի վրայ, ինչի Կովկասում, թէ Տաճկաստանում—այն «անտեսական լուսարանութեան» այդ անշը-նորճք փաստաբանները պատրաստ են միև-նոյն սկեսաակամ անհաւասարութեամբ բացա-տրել Տաճկահայաստանի ամենօրեայ նահա-տակութիւնը, քրդի ու տաճկի աշխարհասա-սան վայրագութիւնները և աշխ և այլն... Լեզուին սանձ չը կայ. արդուում է հազար ու մի ձևով, անուս ու թերուս «քարոզչի» բերանում և աղէտ ու հանդուրժող ունկնդիր-ների առջև թափում են տիմարութեան մարգարիտները:

Եւ—ցաւօք սրտի պէտք է արձանագրել— հայ յեղափոխական գործիչը հարկադրեալ է այսօր իր գոխիային միջավայրում կու-մըլ ոչ միայն բերօղբաթախի ու վայրենի խռովանքների դէմ, որոնք սխալ ու անհեթեթ լուսարանութիւն են տալիս արիւնստ փա-տերին, ձգտում են շլատել ժողովրդական ինքնապաշտպանութեան անհրաժեշտ գործն ու նրա ղեկավար յեղափոխական կազմակեր-

պութիւնը և այդպիսով անգիտակցաբար սա-տար են լինում խաւար ու ժեքին:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՂԵՏԵԱՆԵՐԻՆ

Մինչև հայ աղէտաւորների օգնութեան գոր-ծը կը ստանայ որոշ կազմակերպութիւն, մենք ներքև ստորագրողներս կամենում ենք այժ-մեանից տալ մեր տուրքը՝ պարտաւորվելով ամսէ ամիս «Մշակի» միջոցով յանձնել աղէ-տաւորներին մեր եկամուտի 10/0-ը և մի և նոյն ժամանակ յանձն առնելով նոյնը հետզհետէ տարածել աւելի լայն շրջաններում: Տուրքը կը յարատէ՛ մինչև այնքան, որքան կը տենն դժբաղդութիւնները մեր երկրում և որքան դեռ կը շարունակվի օգնութեան գործը: Հոկ-տեմբեր ամսից ստորագրել են,—Ա. Գուլօեան —40 կ., Ա. Մանանդեան—40, Մ. Չամա-շուրեան—40 կ., Ա. Ալեմեան—40, Ա. Դամա-րեան—20, Լ. Բարաշանեան 50, տ. Մէլի-քեան 50, Նինա Մէլիքեանց 25, Օլա Արա-գեանց 25, Անուշ Օրօեանց 25, Վարինկա Գեորգեանց 20, Մարիամ Դամարեանց 25, Հ. Պիճիկեանց 15, Խորեն Յովսէփեանց 20, Ա. Շահնապարեան 15, Մանուշակ Օհանեանց 50: Բոլորը 16 հոգի 5 ր. գումարով: Հետեւեալ նոյեմբեր ամսին 5 ր. գումարի հետ կը հրա-տարակվեն և նոր ստորագրողների անունները:

ԴԻՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻՄ

Նոյեմբերի 2-ին

Հոկտեմբերի 17-ի Բարձրագոյն մանիֆէստը մեղ, եղանակներով չը նայած մեր ներկայ ծանր և լարված վիճակին ուրախութիւն պատ-ճառեց: Մանիֆէստը հասնելուն պէս ամիս 18-ին, հեռագրի օրինակը զբօսավայրում գիմ-նադիայի աշակերտների ուշագրութիւնը գրա-ւեց, որոնք իրանց հետ ունենալով ուսանող-ներ, կողմնակի անձաւորութիւնների, կարող էին մի քանի անգամ իրար ձեռքից խլելով, կարծես թէ չէին հաւատում իրանց աչքերին: Հետեւեալ օրը բոլոր խանութները փակվեցին: Հոգեորական դասը, գլուխ ունենալով թեմիս փոխանորդ Կարապետ վարդապետին, ժողո-ւրդի, աշակերտների հետ միասին գնացին Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին, որտեղ մարմնաք կատարվեց: Պաշտօնը քահանայ կարգաց հայերէն Բարձրագոյն մանիֆէստը, ապա խօ-սեց Կարապետ վարդապետը, բացատրելով մանիֆէստի բովանդակութիւնը, որից յետոյ ժողովուրդը ուրախ տրամադրութեան տակ ջրվեց, առանց կարգը խանգարելու: Բացա-կայում էր ոստիկանութիւնը: Մարդիկ կա-տարվեց և ուսաց եկեղեցում, որտեղ լինն էին հայեր, վրացիք, ռուսներ և զօրքը:

Երևանում մեծ հանդէսով բացվեցին թէ տղայոց և թէ օրիորդաց դպրոցները: Կամար-լուի, Դարաշէյազի և Աբարանի շրջաններում գաղղոցական գործը բաւականին առաջ է գնացած:

Մանիֆէստի համաձայն տեղական բանտից արձակվեցին քաղաքական կալանաւորներից մի քանի մարդիկ:

Պ. Տէրունեանց

ՆԱՄԱԿ ՀԻՐԱՆԱԾԻԶԵԻԱՆՑ

Հոկտեմբերի 28-ին

Օրգաւարթի մասի գինւորագրութիւնը այս տարի նշանակված էր հոկտեմբերի 15—17-ին: Վիճակի կանչողներին թիւը 159 հոգի էր, որոնցից գինւոր ընկան 48 հոգի: Վիճակա-հանութեան և բժշկական քննութեան միջոց-ները անցան շատ կարգով և խաղաղ: Նորա-կոշ գինւորներն իրանց հետ Ագուլիսից բե-րել էին սազանդարներ, թէև սկզբից ոստի-կանութիւնը թիւը չը առնեց, որ Օրգաւարթում գուռնայի ձայն դուրս գալ, բայց հոկտեմբեր 17-ին երեւոյն տեղեքը երևանում պնդաց-րին, թոյլատուութիւն ստացան և գուռնայի գլե-րին ընկել էր: Նորակոշները մի քիչ Օր-գուարթի փողոցում պար գալուց յետոյ, սա-ղանդարն առաջներն առնելով՝ հարա-հրոցով և ուրախութեամբ գնացին Ագուլիս:

Սակայն Կարճեանից, Վերին և Ներքին Ա-գալից և միւս հետո գիւղերից եկողները այդ գիշեր մնացել էին պօստի կայարանում, երկուդ կրելով քարվանսարաններում մնալ: Կայարանի հանդէպ չայլի խանութ պահող Գալաթայի Բայրամը գիշերվայ մի ժամանակ գալիս է հայերի մօտ կայարանում և սպառնալիքներով պահանջում է հայերից ամեն մէկից 20—30

Այսպէս, ասելով որ նա իր չայլիքներն կապալով վերցրել է քաղաքից և օտար տեղից եկողները պէտք է անպատճառ իջնեն այդ չայլիքներն առնել և վարձ առնել: Հայերը տեսնում են, որ զինավորված վատ հետեանք կառուցել և ստանալ, տալիս են ով 20—30 կօպէկ Քալաթայի Բայրամին և ուրիշ տեղեր: Հետեանք օրը, երբ գահադաշնակ են հայերը, դրա դէմ քաղաքի ստորոտում Բիզանդիին, նա պահանջում է Քալաթայի Բայրամից ապօրինի ստացած փողերը և վերադարձնում է հայերին: Հատ հատ սպանութիւններ և կողոպուտներ անպակաս են նախնիների գաւառի գիւղերում և ճանապարհներում:

Հոկտեմբերին, երբ Ջահրի գիւղից պրիստաւի մօտից հասարակութիւնը վերադառնում էր, ճանապարհին սպանեցին Ղարաբաքայի շինական տանուտէր Աբրահամ Վարդանեանին և արարան ինչ որ վրան ունէր և հրացանը, իսկ նրա թուրը հաստով Աբուլը, որ տանուտէրի հետն էր, անհետացել է:

Հինգ օր արանից առաջ թուրքերը յարձակում են գործում Սուլթանբէկ հայ գիւղի վրա: Թուրքերը յետ են մղվում և իրանց հետ քշում են Սուլթանբէկիցների ոչխարը, նրանց յետեից հանող մի քանիսը Փոտէյակի գիւղի պահապան զինուորիցի ոչխարի մի մասը կառողարում են յետ խել: Հէնց այդ միջոցին Ղարաբաքի թուրք գիւղի մօտ կուր է ընկնում թուրքերի և զինուորների մէջ, որի ժամանակ սպանվում են 7 թուրք և մէկ զինուոր, նոյնպէս ոչխարի հետ տարվող հայ հովիւը: Երէկ, ամսին 27-ին սպանված զինուորի ընդհին նախնիներն և թուրքները կատարվեց զինուորական ծէսով: Հանգուցեալի դազադի վրա հայերը ծաղիկներից փունջեր և պսակներ էին դրել: Դազադը զօրանոցից երաժշտութեամբ բերվեց ուստաց եկեղեցին, այդ տեղից էլ գերեզմանատուն: Դազադին հետևում էին կոմանդները, նոյն գիւղի բոլոր օֆիցէրները, նոյնպէս բազմաթիւ հայեր: Հայերը գերեզմանատանը ճաշ էին պատրաստել թաղման մասնակցողներին համար:

Այսօր ժամի 11-ին քաղաքային դպրոցում թուրք և հայ աշակերտներից մի քանիսը իրար վրա ատրճանակներ արձակեցին, իսկոյն քաղաքը երկիւղից տակ ու գլուխ եղաւ, բայց շնորհիւ տեղիս զօրքի՝ կարգը վերականգնվեց և այս րօպէս ուսումնարանում քննվում է անկարգութեան պատճառը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Ղազարի դաւառից Կովկասի վարչութիւնը հեռացրեց գաւառապետ Արեւիկին, որը երկաթէ ձեռքերով պահում էր գաւառի թուրք ազգաբնակչութեան աւագակ տարրերի սանձը և չէր թողնում արեւելահայերին ծագելու: Ղազարի ամբողջ հայ ազգաբնակչութիւնն առանց բացառութեան և խաղաղ թուրք հողագործ տարրը մի քանի անգամ խնդիրներ ներկայացրին Փոխարքայի քաղաքացիական մօտի օգնական Սուլթան-Իրիմ-Գիրէյին, որ այդ աւագակները դադող, ազգաբնակչութեան բարեկամ գաւառապետին չէր հեռացնեն իր պալատից, եթէ ոչ այդ գաւառում էլ արեւելիկը հոսէ: Լսող չեղաւ ժողովրդի այդ արդար բողոքներին: Ի դուր թիֆլիսում ապրող հայերը մարցիկ էին ուղարկում Փոխարքայի օգնականներին մօտ, ի դուր նրանք ապացուցանում էին, որ Ղազարի աւագակնոց գաւառը շնորհիւ Արեւիկի անա 3 տարի է թիֆլիսից անգամ խաղաղ է: Այդ բոլորն ի դուր անցան: Արեւիկին հեռացրին և անա Ղազարի գործակալ քահանան երէկ, նոյեմբերի 5-ին հաղորդագրել է թիֆլիսի առաջնորդին, որ Ազգաբնակչից Ղազարի տնոյ առաջարկին, 9 վերստ տարածութեան վրա, արդէն թուրք աւագակներն սկսել են կողոպուտ կատարել և ճանքորդներ: Պատրաստվում է անպատճառ արկունհղութիւն: Իսկ Արեւիկի դէմ միակ ինտրիգներ լարողները եղել են Ղազարի թուրք բէկերը և ազանները, դուրս ունենալով յայտնի Մահմէդ Աղա Իսկանդարբէկովին, որը 300 ձիււորներ էր հաւաքել հայերի վրա յարձակվելու: Երկրի զօրաւորները եթէ ուղք չը դարձնեն այդ բանի վրա, ազգաբնակչութեան հոսեցրած անմեղ արիւնը կը ծանրանայ նրանց խղճի վրա:

Էջմիածնից, Գեղարքան ձեռնարանի աշակերտներից ստացանք հետեւեալ հոտագիրը: «Արտայայտում ենք մեր խորին վշտակցութիւնը մեր թանկագին ընկեր գիւմարիստ Յովակիմ Նազարբէկեանի աղէտալի մահվան առիթով: Զեմարանի ընկեր-սաներ»:

Պարիզի «Le Journal» լրագրի թղթակից պ. Գարբիէլ Բերտրան, որ այժմ գտնվում է Թիֆլիսում, խնդրում է բոլոր այն անձանց, որոնք ունեն թիֆլիսում պատահած վերջին դէպքերի, հոկտ. 18—22-ի դէպքերի լուսանկարները, բարեհաճեն մի մի օրինակ ուղարկել իրան «Орианта» հիւրանոցը, № 33:

Թիֆլիսում մի խումբ օսեր, Թիֆլիսի արհեստաւորաց զարոյի ուսուցիչ Պետր Թէգէնիի զեկավարութեամբ, խնդրել են նահանգապետից թոյլտալով կազմելու մի ընդհանուր ժողով, իմնելու օսերի հրատարակչական ընկերութիւն և բաց անելու Թիֆլիսում մի զարոյի օսերի համար: Մենք արտանց ողջունում ենք Կովկասի բոլոր մասեր ու խոշոր ազգերի ազգային ինքնագիտակցութեան զարթոնումը:

Անդրկովկասի երկաթուղու Կովրիլի կայարանից հեռագրում են վրաց «Յնօրիս-Փուրցէլի» լրագրին, որ նոյեմբերի 2-ի գիշերը 2էրուլի կայարանի մօտ զինուորական մի գնացք գծից դուրս ընկաւ և խորտակվեց, որովհետեւ գնացքի կարգադրիչ օֆիցէրը սլաքը սխալ էր դրել: Գնացքում եղած զինուորները, չը գիտնալով բանի էությունը, սկսեցին հրացան արձակել տեղացի ժողովրդի վրա, որոնցից սպանեցին 9 մարդ և վիրավորեցին 40-ին, իսկ խանութները թալանեցին ու աւերեցին:

Մօսկվայի հրէական ազգաբնակչութեան մէջ, ասում է «Н. Ж.»-ը, նորից սաստիկ անհանգստութիւն է տրեւում առաջիկայ հրէական գաւառներում ու կողոպուտի առիթով: Հրէաները նորից դատարկում են իրանց ընտանեկանները, նորից տեղափոխվում են հիւրանոցները և իրանց ծանօթ քրիստոնեաների տները: Մօսկվայի հրէաներին աւելի ևս վերջողեցնում է այն, որ փողոցներում շրջում են մի խումբ խուլիգաններ և խաչ դնում կամ գանադան նշաններով շաշտակում բոլոր այն տները, ուր ապրում են հրէաները, իսկ դուրսնալաները սիրալի կերպով հաղորդում են այդ տեղեկութիւնները խուլիգաններին: Հրէական մի քիչ ունեւոր ընտանիքներն շտապում են հեռանալ Մօսկվայից, թողնելով իրանց բնակարանները բազմի կամքին:

Ինչպէս յայտնի է, արտասանմանում հրատարակվող և հոկտ. 17-ից առաջ ուսուստանում արեւելիկ համարվող «Освобождение» լրագրի խմբագիր, նախկին պրօֆէսոր Պ. Վ. Սուրովին վերագրածն է Պետերբուրգ հոկտ. 17-ի մանիֆէստի հրատարակմանը հետո: Ք. Բ. լրագրի աւելով, Սուրովին կարծում է, որ Վիտտէի մինիստրական կարիւստը աշողութիւն կունենայ միայն այն ժամանակ, երբ իսկապի կերպով զիջումներ անէ ծայրայեղ կուսակցութիւնների պահանջներին: Սուրովին իրան համարում է սահմանադրական-դեմօկրատների կուսակցութեան մէջ և մտադիր է իր «Освобождение» լրագրը հրատարակել Ռուսաստանում, ունենալով իր գլխաւոր աշխատակից Միլիկովին:

«Слово.» լրագրը հաղորդում է, որ Պետական Դոմայի անդամները ընտրութիւնը կայանալու է զեկտեմբերի սկզբներին:

«Нов. Вр.» լրագրը հաղորդում է, որ Պետերբուրգի համալսարանում կայացել է Ուկրաինայի ուսանողների միութիւն: Երկար վիճարանութիւններից յետոյ միութիւնը միաձայն որոշում է կայացրել, որ Ուկրաինայի համար անհրաժեշտ է ինքնավարութիւն գեմօկրատական դաշնակցական հիմքերի վրա:

Թիֆլիսի հետեակ գնդի օֆիցէրների վերջին խորհրդում այս օրերս քննվում էր այն հարցը, թէ ո՞վ է մեղաւոր հոկտ. 22-ի արեւմտիկ դէպքում: Օֆիցէրների մի մասը, բնականաբար, մեղաւոր է համարում զոհերին, նրանք թարեւ էին նետում, ատրճանակ կրակում... իսկ անմեղ «հայրենասէները» միայն անձնա-

պաշտպանութեան համար էին մտածում: Իսկ օֆիցէրների մի ուրիշ խումբ, դրա հակառակ, պնդում էր, որ I գիմնազիայից քարեր էին նետում յարձակվող աւերիչներից պաշտպանվելու նպատակով, իսկ յանցաւորները «հայրենասէներն» էին: Երկար վէճերից յետոյ որոշվեց ընտրել օֆիցէրներից մի յանձնաժողով այդ գործը քննելու համար: Այդ յանձնաժողովը գիմում է անում այն բոլոր անձերին, որոնք որ և է կարեւոր տեղեկութիւն ունեն այդ պահարկների դէպքի մասին, գալ և ցուցում տալ յանձնաժողովին, որպէսզի ճշմարտութիւնը երևան գայ:

Վերջապէս անցեալ օրը զինուորները դուրս հանվեցին Թիֆլիսի ժողովարանի շէնքից և «Պուր-Լիլին» ճաշարանից: Շինութեան ներքին մասերը կրում են վանդալական աւերման դօրեղ հետքեր: Լսվում է, որ ժողովարանի աւազները և զինուորական վարչութեան ներքին զարգացումները միտակց կազմելով աւերածի ու կողոպուտի ցուցակը, պէտք է փնտնեն պահանջներ զինուորական վարչութիւնից:

Թիֆլիսի Դոմայում ձայնաւոր պ. Սվեշնիկեանը առաջարկ է արել Գուրիայում Էկզէկուցիաներից փնտնած գիւղացիներին օժանդակութիւն հասցնել դրամով: Պէտք է յուսալ, որ այդ առաջարկը միաձայն և ուրախութիւնով կընդունվի: Միւս կողմից Դոմային առաջարկ է արել նախկին ձայնաւոր Ի. Նրամէլովը, որ Գուրիայիցներին նպաստ արվի և Դոմայիսի նահանգապետ Ստարոսելսկուն մի շնորհակալական ուղերձ՝ նրա խաղաղած մարդասէր ու լուսաւոր գերի համար:

Անդրկովկասի երկաթուղիների ծառայողների մէջ ատորարկութիւն է բացված գուրիացիների օգտին: Ստորագրութիւնը մեծ աշխուժիւն է գտնում: Բոլոր ազգութիւններից պատանող անձներ էլ մեծ ուրախութիւնով տալիս են իրանց լուսն փնտնած գուրիացիներին օգտին: Ուրախութեամբ արձանագրում ենք, որ հայերն էլ այդ բարի գործում ոչնչով չեն չեն մնում միւս զրացի ազգութիւններից:

Թիֆլիսի դոմայի ձայնաւոր պ. Սվեշնիկեանը դոմային առաջարկել է միանալ կայսրութեան մէջ օր օրի վրա զօրացող ընդհանուր ներում պահանջող շարժումին քաղաքական յանցաւորներին համար առանց խորութեան: Այդ համակրելի առաջարկին միայն ծափահարել կարելի է:

«Нов.» լրագրը հաղորդում է, որ յայտնի Գեօրգի Պապոն քահանան, որ անցեալ յունվարի դէպքերից յետոյ Պետերբուրգից փախել էր արտասանման, մօտ ժամանակներս վերադառնալու է Պետերբուրգ:

Այսօր, նոյեմբերի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին, Թիֆլիսի Դիլուրէ թաղում կայանալու է երեք սօցիալիստ-ֆէդէրալիստական կուսակցութիւնների միութեոց: Մասնակցում են սօցիալիստ-լեւափոխականները, դաշնակցականները և սաքարթվէլիստները: Միտնվում ամփոփել ճառերի նիւթն է զինուորական վիճակը Լեհաստանում և նրա հաւանական հետեանքները:

«Возр.» լրագրին հեռագրում են Պետերբուրգից նոյեմբերի 4-ին. «Руч.»-ին հեռագրում են Պարիզից, որ Պրէսանսէն մի ճառ ասաց որով մեղադրում էր Վիտտէին կողոպուտների և աւերումների գործում, խորհուրդ տալով մերժել ուս կառավարութեան փոխառութիւն տալը:—«Միւսիստների կօմիտէում հաւանութիւն տուեց Կօկօլցեկի ծրագրին նախարարներութիւնը վերականգնելու, միլիցիա կազմելու, ուժեղացրած պահպանութիւնը վերականգնելու և նախարարները կողոպուտներին 20 միլիոն ռուբլի օժանդակութիւն տալու մասին»:

Պետերբուրգի «Н. Ж.» լրագրը մի առաջնորդող է նուիրել մայրաքաղաքում տրեղ յուզված վիճակին և տարածվող լուրերին: Այդ առաջնորդողում ի մէջի այլոց ասված է. «Պետերբուրգում ընդհանուր սարսափն աւելի և աւելի սաստկանում է: Հրէաներին, ուսանողներին, աշակերտներին կողոպուտ և տախի լուրերն սպառնական կերպով արձար են ընդունում: Հասարակութեան մէջ լուրեր են պատում, որ

կազմակերպվում են սև հարիւրեակներ և շատ շրջաններում մեղադրում են այդ բանում ուստիկանութեանը: Պետերբուրգի քաղաքապետը հրամայում է ոստիկանութեանը միջոցներ ձեռք առնել քաղաքացիների անձր և գոյքը պաշտպանելու: Բայց ընդհանուր շփոթութեան մէջ այդ հանգամանքով բաւերին չեն հաւատում, և վրդովման ու երկիւղն աւելի և աւելի զօրանում է:—Լրագիրը նոյն հոգեկան տրամադրութիւնը, նոյն յուզիչ լուրերը և նոյն խառնաշփոթ վիճակն է նկարագրում Մօսկվայի վերաբերմամբ: Եւ միթէ նոյն վիճակը չէ նաև մեղանում—Թիֆլիսում:

Ստացանք հետեւեալ նուէրներ. I. Նախիջևանի աղէտի զոհերի օգտին 1) ինժ. Եարամիշեանից (Կուլաուկ) 50 ռուբ., 2) Կ. Հ. միջոցով մի խումբ հիւրերի մէջ հաւաքած 8 ռ., 3) Կայիսիկի կայար. Կարապետ Ա. զայեանից 100 ռ. II. Շուշում փնտնածներին օգտին 1) բժշկապետ Գասպարեանից 100 ռ., 2) Դերբենտից Ի. Պետրոսեանի և Ն. Ասրիանի ձեռքով հաւաքած 46 ռ. 80 կ., 3) ինժ. Սկ. Եարամիշեանից 100 ռուբ., 4) Ս. Մըկրտչեանից (Մանլուրի կայար.) 10 ռուբ., 5) Համբարձում Շիտանից (Լօզան) 50 ռ., 6) Չափլիսի կայար. Բ. Մուկանովից, 5 ռ. Արէշովից, Մ. Մուկանիցի և Բ. Կարապետեանից 3 ռուբլի, 7) Բանանց գիւղի հասարակութիւնից 20 ռուբլի 40 կ. 8) Իււմբէտ Կօրուզից շուշեցի Աստուածատուր Միլիքեանից 60 ռուբ., 9) Նիշաբուրի հայ և հրէայ վաճառականներից Ա. Ներսիսեանի ձեռքով հաւաքված 140 ռուբ., 10) Մոլատանից Շիրին Մուսայիեանի միջոցով 59 ռ. 35 կ., 11) տիկ. Վ. Միլիք-Հանապարեանից (Մեղով) 5 ռ. 12) Կօկանից 3. Յովակիմեանի ձեռքով հաւաքած 15 ռ. 50 կ., 13) Կախկայի հայ հասարակութիւնից Մ. Յակովբեանի միջոցով 48 ռուբլի:

Մեզ խնդրում են տղադրել հետեւեալ. «Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութիւնը շնորհակալութեամբ ստացաւ վերջին թուրքական աղէտներից փնտնածների համար՝ Թեմալ-Խան-Շուրա քաղաքից պ. Բ. Տէր-Աբրահամեանի միջոցով հաւաքած 136 կտոր հին շորեր, Անամի կայարանից պ. Լեւոն Ստեփանեանից 50 կտոր գոր և 1 գոյգ կօշիկ, Մալիօպ քաղաքի հայ հասարակութիւնից 600 կտոր, որ նուիրել են պ. Բ. Երեքեանից 180 կտոր, Մեղրէսեանից 83 կտոր, Շապուվան Ա. 40 կտոր, Կարապետեանից 43, Տամանցեանից 40, Տէր-Օհանեանից 37, Մուցեանից 26, Մոլատանեանից 10, Մոշեանից 13, Չիլիթեանից 12, Աւետիսեանից 8, Միլադեանից 15, Թերեզեանից 5, Աւետիսեանից, Չախիբեանից 5, Վարդանեանից 24, Թիլիշեանից 12: Թիֆլիսի հայ հասարակութիւնից՝ երբ. Եարապետեանից ստացված է 3 հատ կանանց նոր վերաբրուներ, 2 գոյգ կանանց նոր կօշիկներ, 35 գոյգ նոր չուստեր դանազան մեծութեամբ, օր. Վ. Միւսսեանից 32 կտոր հին շորեր և նրա միջոցով դարձեալ 19 կտոր, տիկ. Շ. Շիրանեանից 19 կտոր, տիկին Վառվառէ Թագեդեանից 3 բալկալէ վերմակներ և 31 կտոր շոր, դերասան պ. Յով. Արէշեանից 13 կտոր, պ. Ա. Սերբերեկեանից 5 գոյգ հին երեխաների կօշիկներ, 1 գոյգ կալօշ, 21 կտոր շոր, 2 մրուխտ Շիկանեանից 24 կտոր շոր և 4 գոյգ կօշիկ, տիկին Սաթեանից Տէր-Սէրեանից 16 կտոր, Մանա Միլեդեանից 67 կտոր, մի անյայտից 2 բարձ խոտից 1 բարձ բմբուլից, 8 կտոր շոր, տիկին Սօֆիա Ղազարեանից 25 կտոր, տիկին Ս. Դօնեանից 49 կտոր, օր. Ն. Յովանեանից 14 կտոր, փող ստացված է մի անյայտ պ. Ս. Հէլրանեանի միջոցով 107 ռուբլի և մի անյայտից 1 ռ., բացի դրանցից վարչութիւնը նպաստաւ մատոյց յանձնաժողովից ստացել է 1500 ռ., որը արդէն բաժանված է վերջին աղէտից փնտնածներին նրանց գրութիւնը քննելուց յետոյ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԲՈՒԼԳԱՐԱՆԱՅ ԳԱՂՈՒԹԸ
III
1895 մայիս 11-ի հայկական բարենորոգումներու ծրագիրը *)
*) Եւր. Հայ Ուսանողական Միութիւնը բնօրինակ ձեռն հրատարակած է այս ծրագիրը: Շատ ցաւով է, որ Ուս. Միութեան այս օրինակ աժանագին հրատարակութիւնները ժողովրդին մէջ տարածելու համար միջոցներ ձեռք չեն աւանդում:

Թեանց ճնշման տակ սուլածանք ստիպուած եղաւ ստորագրել, մնաց մեռած տառ—շնորհիւ Ռուսիայի ընդդիմութեան: 1896 օգոստոս 14-ին Մակարիմօֆ, Կ. Պօլտոյ ուսանական դեսպանատան առաջին թարգմանը, սուլածանքի և դեսպաններու կողմէն ներկայանալով օսման նախ քան ինչ որ իրենց հարցումները կրկնէր, որ պետութիւնները շուտաւարժ միջոցներ ձեռք պիտի առնեն հայկական բնֆորմներու հարցը պատշաճաւոր եղանակով լուծելու համար, և թէ ցուցարարները կարող են վստահ ըլլալ իր խոստմանը վրայ: Բայց խոստումը մնաց լուր խոստում և Հայաստանի վիճակը երթալով աւելի ծանրացաւ ստիպելով ժողովրդին ձգել հայրենի օջախը և գաղթել:

Իրեքու այս վիճակին մէջ գաղթականութեան հոսանքը դէպի Բուլղարիա շուտով կանգ չառաւ, այնպէս որ երթալով նոր գաղթականներու թիւը անցաւ հինգերկու:

Նորը միշտ բաղժաման մէջ է կղեր հինին հետ: Այսպէս ալ կը պատահէր ներքապ պարագային: Կը ծագէ հինի և նորի հարց: Տեղացի հայը նոյն իսկ կուգէ իր եկեղեցիին դուռը փակել գաղթականին առջև:—Ի հարկէ Պօլէն եկած գաղթականները իբրեւ աւելի յառաջացած, ուստի և աւելի պահանջաւոր տարր յուզմունք պիտի յառաջացնէին տեղացիներու լծացած կեանքի մէջ: Բայց յուզմունքը երկար չի տևեր, որովհետեւ նորեկները շուտով կը գրաւեն հրապարակի վրա պատուաւոր դիրք: մտաւոր մակարդակով իրենց տեղացի ազգակիցներէն արդէն բարձր, անոնք կը գրաւեն նաև վաճառականական ասպարէզի մէջ ոչ արհամարհելի տեղ: Թոյլը ստիպման լըլլային երթալով աւելի զօրաւորին: Թէև հինին և նորին միջև ընդհարումներ տեղի կունենան, բայց ժամանակի ընթացքին կը վերանա տարբերութիւնները ու խորութիւնները, եթէ ոչ բոլորովին, բայց կարելի է հաստատապէս ըսել, որ իրողը և ընդհանուր գծերով վերցած են անոնք այժմ:

Հինը տեղի տալով նորի բարերար ազդեցութեան կը փրկուի բոլորովին այլասեռուելու ու օտարանալու վտանգէն,—ի հարկէ բացառութիւններ միշտ կը լլայնեն,— և երկուքը դառնալով մէկ մարմին գաղութը կրկին ունենալ իր ինքնուրոյն կեանքը, կրկին փարել իր գաղութական, եկեղեցական, տնտեսական, քաղաքական—կազմակերպական, մէկ խօսքով, իր հասարակական գործերը:

Ընդհանուր առմամբ բուլղարացիները կը գտնուին անասնապէս ապստով վիճակի մը մէջ: Վաճառականները կը կազմեն կարևոր ստիպում մը, իսկ ասոնց օտու կը ծառայեն գործակալաւորներու, գրադիրներու և ծառայողներու դասակարգ մը, ապստով վիճակի մէջ:

Գիտաբար այս դասակարգի մարդոց համար մենք շատ գովաւորներ չունենք տալու: Մասնաւոր վաճառականներու օտու ծառայող պարոնները իրենց ժամանակը ու առողջութիւնը կը վատնեն թնթամիտ ու շուայտ կենցաղավարութեան մը մէջ: Երկրորդին ծառայող գարդարող և զայն արժանաւոր քաղաքացի դարձնող առաքելութիւններէ և իրէտալներէ հետեւ կը մնան անոնք: Բացառութիւններու մասին խօսք չը կայ, բայց բացառութիւնը օրէնք չէ:

Հայ վաճառականը ամենուն ծանօթ է: Բուլղարացի վաճառականն ալ ազգասէր է, կուգէ ազատ ու ինքնավար տեսնել Հայաստանը, ունի նաև ուրիշ շատ բարի ցանկութիւնները դէպի իր տանջուած եղբայրակիցները, եթէ միայն այդ ամենը գրգռան չի դաշին: Կը սիրեն մարդով Հայաստանը գինով տեսնել, պատրաստ և ինքնապաշտպանական դրութեան մէջ, բայց կը զրանան շատ անգամ փամփուշտի մը փող տալ: Իրաւ է, անոնք կը մասնակցեն այդ ուղղութիւնով եղող պարբերական հանգանակութիւններուն, բայց ոչ ցանկալի և արդար չափերով:

Այդպէս չէ արհեստաւոր և բանուր դասակարգը: Ան սիրալոյսաւ կը վճարէ իր ազգային ու հայրենասիրական տուրքերը, չը նայելով իր ներքին համեստ վիճակին: Հայ արհեստաւորը և բանուրը, ինչպէս ամեն տեղ, այստեղ ալ ունեցեր է իր շինիչ դերը: Գալով իբրեւ գաղթական, մեծ դարձ տուեր է նա արհեստներու և աշխատանքի ծաղկման Բուլղարիոյ մէջ: Ան գիտակից է իր այս դերին և հպարտ: Շատ անգամ անոր բերնէն կարելի է լսել. «Մենք դեռ չեկանք շատ բան այնպէս չէր, ինչպէս այժմ»:—Եւ դա իրողութիւն է:

Բանուր դասակարգը կաշխատի ֆապրիկներու

մէջ—եթէ կարելի է փոքր գործարաններու ալ անունը տալ,—նաւահանգիստներու և կաշարաններու վրա իբրեւ բեռնակիրներ, հրեկողներ, պահպաններ և այլն: Բեռնակիրները ընդհանրապէս Մուշի և Վանի գաւառներէն են:—Արհեստաւորները, գործարանական բանուրները մեծ մասամբ գիտեն գրել ու կարդալ: Գաւառացի բեռնակիրները գուրդ են այդ բարեբէն: Անոնք կը զգան ուսման պակասը և շատ դժբաղդ են այդ պատճառով:

1903-ի զարնան Վառնայի մէջ գիշերային դաստիարակութիւններ հաստատեցինք մենք գաւառացի անգրագետ հայերու համար: Տեսնելու էք, թէ ի՞նչ սիրով և հետաքրքրութեամբ փաբեցան անոնք աշխատանքներուն, բայց շնորհիւ արգելիչ պարագաներու, որոնց մէջ կային աղայական քմահաճոյք, մեղ չի վիճակուեցաւ երկար շարունակել սկստած օգտակար գործը: Ասոնցմէ զատ Բուլղարիոյ մէջ կան հայ բժիշկներ, Պօլէն վիճակուած իսկ յետոյ Մօֆիայի մէջ կրկին քննութիւն անցուցած, պետական պաշտօնեաներ, խանութպաններ, տառերու ձուլիչներ և այլն:

Յիշենք նաև, որ հայ մը իբրեւ առաջինը Բուլղարիոյ մէջ, Եւրոպայէն մեքենաներ բերել տալով սկսած է շինել տալ յարգէ գլխարկներ երկու սեռի համար ալ:

Այսքան մեր գաղութի տնտեսական վիճակի մասին, գտնեք այժմ մտաւորականին: Բայց այդ մասին յաջորդէ:

Մարդպետունի
Թիֆլիս:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէ՛նրան, հոկտեմբերի 22-ին Բաղադական կեանքը Պարսկաստանում նորից ստացաւ իր սովորական ֆիզիոնոմիան: Մօտ երեք շաբաթ է, որ Պարսկաստանի միապետ Մուղաֆֆէր-էղզին Շահը չորս ամսեայ բացակայութիւնից յետոյ արդէն վերադարձել է իր եւրօպական ճանապարհորդութիւնից և ինքնուրուի կառավարութեան դեկը իր ձեռքն է առել, որ նրա բացակայութեան օրով դեկավարում էր Ասորկատականի կառավարիչ—Թաղաժառանգը: Վերջինս կառավարութեան իրերի գրութեան մասին իր հօրը մանրամասն ղեկուցումն տալուց յետոյ, անմիջապէս ճանապարհ ընկաւ իր հին պաշտօնատեղին, առանց գոնէ մի քանի օր սպասելու մայրաքաղաքում, որի պատճառը հետեւեալն է:

Մօտ երկու ամիս է արդէն, որ Թիւրքիայից մի քանի հազար սպառազինված մարդիկ (քրդեր և թիւրքեր) անցել են Թիւրք-պարսկական սահմանը և բնակութիւն հաստատել Պարսկաստանի Լայիշան գաւառակում, որ պարսկական Գիւրգեստանի մի մասն է կազմում և գտնվում է Սօվուդ-Բուլղաղից օտու 80 վերստ հեռավորութեան վրա: Պաշտօնական տեղեկութիւնները մինչև այժմ դեռ ևս չեն պարզարանել, թէ միջեր են գրանք և ինչո՞ւ համար են ոտք դրել պարսկական հողի վրա: Մինչև այժմ այստեղ միայն լուրեր են պտտում, իբր թէ գրանք բոլորովին անհիմն կերպով պահանջում են իրանց յանձնել այդ գաւառակը, պատճառաբանելով, որ դա մի ժամանակ Թիւրքիային է պատկանելիս եղել:

Թաղաժառանգը դեռ մայրաքաղաքումն էր զած ժամանակ աշխատեց Ասորկատականի գլխաւոր դատաւորի միջոցով իմանալ, թէ ինչու համար են այդ սպառազինված մարդիկ ներս խուժել Պարսկաստան, բայց վերոյիշեալ մարդիկ պատասխանեցին, որ իրանք ոչ թէ ղրկուողներ են, այլ սովորական աշխիւթներ (վրանաբանակ), սակայն նրանց մինչև այժմ ցոյց տուած վերաբերմունքը դէպի պարսից կառավարութիւնը այդ չէ հաստատում: Ասում են նոյն իսկ, որ իբր թէ Սօվուդ-Բուլղաղի դատաւորը մի նամակ է բռնել, որ գրել է Թիւրքիայի արտաքին գործերի մինիստրը և զրգուած է գրանք ոյժով տիրանալ այդ հողին: Հէնց դրա համար էլ ինքն էլ գրանք մային դեռ թէ վեհափառ Շահը պաշտօնապէս դիմեցին Թէ՛նրանի թիւրքաց ղեկավարին նրանց մասին պաշտօնական տեղեկութիւն ստանալու, որի վերաբերմամբ թիւրքաց ղեկավարը չը կարողացաւ մի որոշ պատասխանով պարսից կառավարութեան բաւականութիւն տալ, պատճառաբանելով, որ ինքն էլ գրանք մային դեռ ևս ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չէ ստացել Կ. Պօլսից: Հէնց դրա համար էլ պարսից կառավարութիւնը մի քանի օր առաջ անմիջապէս դիմել է Թիւրքիային և քաղաքական բնաւորութիւն կրող այդ միջադէպի

մասին պաշտօնական բացատրութիւն պահանջել, ենթադրելով որ այդ անցքի աստուղը կարող է տիրապետական բնաւորութիւն կրել: Թաղաժառանգի մայրաքաղաքից անմիջապէս Ասորկատական աճապարելը ըստ երևոյթին սերտ կապ ունի այդ միջադէպի հետ, որի ինչ բնաւորութեան լինելը հաւանօրէն շուտով կը պարզվի:

Եթէ ճիշտ է այն լուրը, որ իբր թէ վերոյիշեալ թիւրքացապատակները կամենում են անիրաւացի կերպով տիրանալ Լայիշանին, այն ժամանակ պարսից կառավարութիւնը իր, հէնց Ասորկատականում եղած զօրքերով կարող է նրանց դուրս վաճել Պարսկաստանի սահմանից, հակառակ դէպքում, որովհետեւ դժուար է Ասորկատականում ցրված զօրքը ի մի հաւաքել, կառավարութիւնը կարող է ներս խուժած մարդկանց քշել պարսկահպատակ մի քանի քրդական ցեղերի (օր. փիւրան, մամաշներ, մանգուրներ, գեօվուրներ և այլն ցեղեր) օգնութեամբ, եթէ դեռ ի նկատի չունենանք Սուլթուզում գտնվող պարսից 400 զինւորները, որոնք դարափափա են կոչվում և 1828 թ. Կովկասից Ասորկատական են փախած: Գաղաքումն են գտնվում և Սպահանի դատաւոր Զիլի-Սուլթանը (ներկայ Շահի մեծ եղբայրը) և Շիրազի դատաւոր Շահ-Սուլթանէն (Շահի որդին), որոնք հաւանօրէն արտաքուր կարգի պատուէրների համար են այստեղ հրաւիրվել: Այսօր միայն հաստատ աղբիւրից իմացայ, որ Զիլի-Սուլթանը ինչդամաւորացի է եղել Շահին, իրեն թոյլ տալ ամենից առաջ արտասահման գնալ բժշկվելու նպատակով, որը երևի գրական մտքով կը լուծվի:

Կովկասեան մամուլին արդէն յայտնի է այն զրպարտութիւնը, որ հրատարակել էր համարաւական „Kacni“ լրագիրը, իբր թէ ղեկներով լի մի արկղ, որ բերվել էր Էնդէլի Միւր-Բահաթուր Զանգիի իրերի հետ, պատկանելիս է եղել պարսկահպատակ Թումանեան եղբայրների առևտրական տանը: Այդ զրպարտութեան առիթով նորին Շահի և Սմիր Բահաթուրի ներկայութեամբ մանրամասն քննութիւն կատարվեց, որի ժամանակ Սմիր Բահաթուրը կտրական կերպով յայտնեց, որ այդպիսի մի արկղ իր երկրի հետ երբեք չէ եղել և վերոյիշեալ լրագրի հաղորդածը հիմնովին զրպարտութիւն է: Մուշի-Գովկէն իր ժամանակին մի պաշտօնական հեռագրով հերքեց այդ զրպարտութիւնը և խաղաղացեց յուզված կրքերը: Երեկ լոյս տեսաւ պարսից «Իրան» պաշտօնական թերթի 16-րդ համարը, որտեղ թերթի խմբագրութիւնը Աղաթիւների այդ զրպարտութիւնը կրկին հերքում է, որի թարգմանութիւնը հետեւեալն է.

«Էնդէլիից ստացած լուրերի համաձայն մենք մեր թերթի նախորդ համարում արդէն յայտնել էինք, որ այնտեղ Վաղիւր-Գարդարի իրերի հետ բերված ղեկներով լի մի անդուկ է գտնվել և պատկանելիս է եղել Թումանեաններին: Այդ մի և նոյն բանը տպված էր և Բագում լոյս տեսնող „Kacni“ լրագրում: Բայց Թումանեան եղբայրների տան մի բողբոջից յետոյ, որ ուղղված էր „Kacni“ լրագրի գէմ, արտաքին գործերի մինիստրութեան շնորհիւ պաշտոնում կատարված քննութիւնը պարզեց, որ այդ լուրը բոլորովին անհիմն էր և այդպիսով Թումանեան եղբայրների օձիքը միանգամայն ազատվեց այդ ստացող զրպարտութիւնից»:

Ինչպէս տեսնում է ընթերցողը Վիլիսիւմ կայսրի ամպնովանու պաշտպանութիւնը վայելող համախառնական ինտրիգան մի աւելորդ անգամ էլ պաշտօնապէս խայտառակվեց և զրպարտիչ անունը դրոշմվեց այն թերթի ճաշկատին, որ աշխատում է Պարսկաստանի նման խաղաղ մի երկրում պարսիկներին զրգուել հայերի դէմ: Բայց այդ ինտրիգանները չեն ուղում հասկանալ, որ պարսից կառավարութիւնը մի անգամ ընդ միշտ համոզվել է, որ իր հպատակ հայերը Պարսկաստանի ամենախաղաղ, աշխատասէր, կուլտուրական և հաւատարիմ մի ժողովուրդ են կազմում, որին հարկաւոր է առաջվայ հովանաւորութիւնը և պաշտպանութիւնը ցոյց տալ:

Ճիշտ է, պարսից կառավարութիւնը համակրելի դրեք է բռնել համախառնական շարժման վերաբերմամբ, բայց համախառնակովի զարգացում էլ իր ժամանակին քարոզվել է հետեւողներ է գտել նաև Պարսկաստանում, չը նայելով, որ դրանց թիւը բարեբաղդաբար քիչ է և այն էլ գաղտնի:

Առաջին անգամ համախառնական պրօպա-

գանդան մուտք է գտել այստեղ մի քանի տարի առաջ Սէիդ-Ջամալ-էղզինի շնորհիւ, որ մի կըթված (Եգիպտոսում) և հետոք մարդ էր և գործում էր Նասրէղզին Շահի թագաւորութեան ժամանակ: Ջամալ-էղզինը կարմիր սուլթանի քաղաքական և կրօնական ձրգաւորներին նշանաւոր պրօպագանդիստներից մէկն էր և առաջին անգամ ծանօթացել էր հանգուցեալ Շահի հետ Եւրօպայում: Շահի վրա Ջամալ-էղզինը առաջին անգամ լուստպաւորութիւն է թողնում, որի համար և հրաւիրվում է Թէ՛նրան, ուր վայելում էր հանգուցեալ միապետի արքայական շնորհները: Կարճ ժամանակից յետոյ Ջամալ-էղզինը գաղտնի կերպով տեղիս ազգ արնակութեան զանազան շրջաններում սկսում է համախառնութիւն քարոզել և ցոյց տալ, որ պարսիկները թուրքերի սերունդն են կազմում:

Յամենայն դէպս այդ հարցը Թիւրքիայի և Պարսկաստանի դիպլոմատիական նորմալ յարաբերութեան մէջ մինչև այժմ դեռ ևս ոչ մի փոփոխութիւն չէ մտցրել. սրան լուստպաւորացի այն փաստը, որ մօտ 10 օր առաջ, երբ տեղիս թիւրքաց ղեկավարատանը սուլթանի ծննդեան տօնի առիթով շնորհաւորութիւններ և հիւրընկալութիւն կար, բարձր հիւրերի շարքում գտնվում էին նաև պարսից Աթաբէգն ու արտաքին գործերի մինիստրը, որոնք վեհափառ Շահի կողմից էին գնացել սուլթանի ծննդեան օրը շնորհաւորելու և դրա առիթով բարեմաղթութիւններ անելու:

Մուղաֆֆէր-էղզին Շահը մայրաքաղաքում ժամանելուց անմիջապէս յետոյ արել է մի քանի կարևոր կարգադրութիւններ, որոնցից յիշենք հետեւեալները:

Թիւրքիայի հետ կապած առևտրական վերջին դաշնագրի ժամանակամիջոցը լրացած լինելով, փինանսներ իմիստոր բեղիկացի Եօսը Շահի կողմից անմիջապէս ուղարկվեց Կ. Պօլսիս, առևտրական դաշնագիրը նորոգելու միստիայով: Հետեւապէս և սխալ է կովկասեան մի քանի թերթերի հաղորդած այն լուրը, իբր թէ Պարսկաստանի բոլոր մաքսերի կառավարիչ Եօսը կարող է շուտով պաշտօնանկ լինել:

Ճիշտ է, պարսիկ ժողովրդական մասսան և բարձր պաշտօնեաներից մի քանիսը նախանձից զրգուած են եւրօպացի այդ միստիստի դէմ, բայց վեհափառ Շահը մեծ պաշտպանութիւն է ցոյց տալիս Եօսին, որովհետեւ համոզվել է, որ վերջինիս շնորհիւ զգալի կերպով կանօնաւորվել են Պարսկաստանի ֆինանսական գործերը ընդհանրապէս և մաքսային գործերը մասնաւորապէս: Ոչ միայն Շահը, այլ և Եօսի ամենաթուղ հակառակորդները շատ լաւ հասկանում են, որ Եօսի շնորհիւ աւելացել են Պարսկաստանի մաքսային եկամուտները և կանօնաւորվել է պօստ-հեռագրատան ֆունկցիան, բայց վերոյիշեալ հակառակորդները չեն կարողանում տանել այն բանը, որ Պարսկաստանում գործող բեղիկացի պաշտօնեաները յանձին Եօսի իրանց չափազանց բարձր և մեծ առճկով, երկրի հարստութիւնը կեղեքում են: Այդ հակառակորդների թշնամութիւնը հետզհետէ վարգահում է, որովհետեւ վախենում են, որ նրանց կը յանձնվի նաև գիւղական տուրքերի և հարկերի գանձումն, որից մեծ մասամբ կարող են ֆուսավել կառուածաւոր հողերականները: Կայնելով իրանց նիւթական և բարոյական ազդեցութիւնը թէ իրանց և թէ կառավարութեան աչքում:

Վեհափառ Շահի վերջին կարգադրութեամբ լուսաւորութեան միստիստ է նշանակվել Եթըմաթ Սալթանան, որ մի բաւական կրթված և լուսամիտ մարդ է: Իրա նախորդն էր Նազիմէ Սոլթան, որին Շահը հաւանօրէն վերապահում է մի ուրիշ, նոյնպէս պատասխանատու պաշտօն: Յուսալի է, որ լուսաւորութեան գոնէ այս վերջին միստիստի օրով պարսից մամուլը մի քիչ ազատութիւն կը ստանց և ցնեղուրական այնպիսի կաշկանդումներով չի սահմանափակվել, ինչպէս էր մինչև այժմ: Ներկայումս պարսից մամուլը և ոչ մի օրգան իրաւունք չունի քննադատելու տէրութեան թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութիւնը և արտաշայտելու երկրի հասարակական կարծիքը: Հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ վերոյիշեալ մամուլը բոլորովին գուրկ է ներքին քովանդակութիւնից և դրան փոխարինում են այս կամ այն անհատներ, մասնաւորապէս պետական նշանաւոր պաշտօնեաների հացէլին անասման կերպով շուայած գովաւանութիւնները: Այդ ցաւալի ե-

բերելով կարող է վերջ տալ նոր միջնորդը, որ միաժամանակ է մամուլի միջնորդ է:

Բացի դրանից Շահը փոխել է թէ՛հրանի հին քաղաքացիներն և նրա փոխարենը ամբողջ մայրաքաղաքի քաղաքացիներ է նշանակել Ա. լազ-Պոլլի, որ մի բաժանան խիստ մարդ է և այժմանից վաճառականների կամայական հրահանգներին վերջ տալու համար շուկայի օպերացիան ենթարկել է որոշ տակադի:

Ներկայումս Շահի պատուհանով մայրաքաղաքի պարագայում, որի համար և Շահը հրամայում է նրան խոսել և եթ ձեռք բերել, բայց ձաժալ-էզդինը մահից խուսափելու համար «բաստ» է նստում թէ՛հրանի մօտ գտնվող «Շահաբադ» պարսկական նշանաւոր ուղևորատնակին: Շահը խոստանում է նրան սպանել չը մալ, եթէ նա խոսել և եթ կը թողնի Պարսաստանը: Նա պարսիկ պահպանների ուղեկցութեամբ անցնում է պարսկական սահմանը և համարում է Բաղդադի կողմերը, որից յետոյ անցնում է Կ. Պոլիս:

Մի քիչ յետոյ արդէն յայտնվում է, որ նա մեծ ուժով էր ստանում Արդու-Համիրից և Կ. Պոլիսում ստացել էր նորից իսկ մի պալատ իր բնակութեան համար: Որովհետև թիւրքերը վերադարձան անձնաւորութիւնը սկսել էր հակառակ պրօպագանդա անել Շահի դէմ, դրա համար պարսից կառավարութիւնը թիւրքերայից պահանջեց ձաժալ-էզդինին, որը, ինչպէս երևում է, վերջի վերջոյ թուականութեան հետ թիւրքերը, երկու տեղութիւնների մէջ ծագած գոտութիւնը վերջ դրվելու համար:

Ձաժալ-էզդինը մեռաւ, բայց նրա ցանած սերմերը թոյլ արմատներ ձգեցին Պարսկաստանում և որոշ շրջաններում սակաւաթիւ համակրողներ գտան:

Թայց բարեբաղդաբար հազիւ թէ համարաւանակութիւնը կարողանայ Պարսկաստանում իր զարգացման համար նպաստաւոր հող գտնել:

Լ. Բարսեղյան

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 նոյեմբերի

Վիէննա: Քննելով գործադուրները Ռուսաստանում «Նոյեմբ. Պրէսս» լրագիրը ասում է, որ առաջ ընկած նոր կրիզիսը ոչ միայն կը կանգնեցնէ կենսը, այլ նոր արգելք է հանդիսանում մանիֆէստի ցոյց տուած քէֆօրմների ներմուծման: Վիտտէի միջնորդութեան պտղաբեր աշխատութեան օգտին ցանկալի է, որ ռուսաց արմատականները, որոնք պաշտպանում են Ռուսաստանի թշնամիներին, յայտնի և ծածուկ ցանկութիւնները, միանան այն խոհեմ տարրերի հետ, որոնք սկսում են վստահութեամբ վերաբերվել Վիտտէի կառավարութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Բարձրագոյն Մանիֆեստ: Յայտնում ենք մեր բոլոր հաւատարիմ հպատակներին: Որովհետև վշտով լցնում է Մեր սիրտը խռովութիւնը, որ անցել է մի քանի գաւառների գիւղերը, ուր գիւղացիները բռնութիւններ են կատարում մասնաւոր կալուածատէրների կալուածներում: Ոչ մի ինքնակամութիւն և կամայականութիւն չեն կարող հանդուրժվել և Մեզանից տրված գինւորական և քաղաքացիական իշխանութիւններ են, հրամայված է բոլոր միջոցներով խափանել և զարգացնել անկարգութիւնները, պատժելով յանցաւորներին: Գիւղական կարիքները մօտ են մեր սրտին և չեն կարող անուշադիր թողնվել: Սակայն բռնութիւնները և յանցանքները չեն բարւոքի գիւղացիների վիճակը, իսկ հայրենիքին կարող են նրանք հասցնել մեծ ցաւ և աղէտներ: Գիւղացիների բարեկեցութեան հաստատ բարւոքման միակ ճանապարհը խաղաղ և օրինական ճանապարհն է և Մենք միշտ Մեր ամենատալան հոգան ենք դարձրել գիւղական ժողովրդի գրութեան թեթեւացումը: Վերջին ժամանակ Մենք հրամայեցինք հաւաքել և ներկայացնել Մեզ տեղեկութիւններ այն միջոցների մասին, որ կարելի էր անմիջապէս ընդունել գիւղացիների օգտին: Այդ գործի քննութեան ժամանակ մենք վճռեցինք. I) Նախկին կալուածատիրական, պետական և ուղեւորային գիւղացիների հողի յետ գնման 1906 թ. յունվարի 1-ից այդ վճարների հաւաքումը բոլորովին դադարացնել: II) Տալ գիւղական

հողային բանկին հնարանութիւն աջող կերպով օգնել սակաւահող գիւղացիներին՝ լայնացնելու համար իրանց հողերի քանակութիւնը, աւելացնելով դրա համար բանկի միջոցները և աւելի նպաստաւոր կանոններ սահմանել փոխառութիւնների համար: Այս միջոցները ի կատար ածելու համար Մենք տուել ենք առանձին ուղեւորներ, Հաւատացած ենք, որ Մեր և ռուսական հողի լաւագոյն ընտրելով այն մարդկանց միահամուռ ջանքերով, որոնք բոլորովին ազատ կերպով պէտք է ցոյց տրվեն գիւղացիների կողմից Մեր ուրիշ հպատակներին հետ միասին, կաշկովի գոհացումն տալ գիւղական ժողովրդի ուրիշ կենսական կարիքներին, առանց զիստ հասցնելու միւս հողատէրերին: Յոյս ունենք, որ Մեր սրտին սիրելի գիւղական ժողովուրդը, հետեւելով բրիտանական պատուիրաններին բարութեան և սիրոյ մասին, կանսայ Մեր արքայական կոչին և կը պահպանէ խաղաղութիւն ու հանգստութիւն ու չի խանգարի օրէնքը և ուրիշների իրաւունքը: Տուած է ծարրակոյէ-Սկիտում, նոյեմբերի 3-ին 1905 թ. իսկականի վրա ստորագրված է «Նիժովոյ»:

4 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ: Պետերբուրգի գործարանների բանւորների դրած պահանջին՝ ութ ժամայ օր մտցնելու մասին, իրեն պատասխան 82 մեքենական և մետաղագործական գործարանների ներկայացուցիչների ժողովը այդ պահանջի դէմ քննեց, գտնելով նրան ոչ չափաւոր գործարանատէրերի և բանւորների համար: Ռուսաց գործարանների քիչ եկամուտ տալիս ի նկատի ունենալով, բանւորական օրվայ կրճատումը առաջ կը բերէ աւելում և անգործութիւն: Բանւորական օրի տեղում թիւրքերը Ռուսաստանում աւելի չէ եւրօպականից, ուր մեքենական գործարաններում, բացի Անգլիայից, աշխատում են 10¹/₂ ժամ, իսկ մետաղագործական գործարաններում ամեն տեղ— 12 ժամ: Այժմ շնորհիւ տօների, բանւորական ժամերի տարեկան թիւը 2700—2800 է, Գիւղականութիւնը կարելի է, իսկ ապրանքի թանկութիւնը բանւորական օրի կրճատման դէպքում կաւելանայ ժողովրդի ծանրութիւնը: Բաղաւոր խաղաղ է: Գործադուրին միացան դեղագործները: Լրագիրները լոյս չը տեսան: Ժամը 3-ին գործադուր արեց Նիկոլայեւի երկաթուղին: Էլէքտրական կայարաններում աշխատում են նաւաստիները: Պետերբուրգի շրջակայքից նորից երևան եկան հեծելազորքի մասերը:

ՄՕՍԿՎԱ: Մօսկովեան հանգուցի երկաթուղիների վրա հանդարտ է: Բոլոր ճանապարհները աշխատում են կանոնաւորապէս: Ծառայողները, մանաւանդ ստորինների մէջ տիրում է աշխատութիւնը շարունակելու ցանկութիւնը: Պետերբուրգի գործադուր անողների կոչը չէ լսվում:

ՎԱՐՇԱՎԱ: Վերսկովում է վարչապալ—Կիէլ—Օդէսա—Մօսկով գծի շարժումը: Գիշերը ըստ պատվում է Լեհաստանի ներքին գծերի վերսկովում: Վիէննայի և Բեռլինի սուբսանդակային գնացքները դեռ չեն գնաց: Բոլոր խաչակրները, դրամաները և բանկերը գնացքների շարժման հետ միասին բացվեցին:

Նիժնի-Նովոգորոդ: Բօրսային ընկերութիւնը միանում է պրօպէստ կուսակցութեան այն պայմանով, որ իրագործէ քէֆօրմները մանիֆէստի ոգով: Ընկերութիւնը կը հրատարակէ իր լրագիրը: Պետերբուրգում սկսվող քաղաքական գործադուր լուրը ճնշող տպաւորութիւն է թողնում:

ՄԱՐՍՈՎ: Բաղաւոր և մի քանի գաւառներ յայտարարված են սաստկացած պահպանութեան գրութեան մէջ:

ՄՕՍԿՎԱ: Այսօր բացվեց կօնսերվատօրիան: Ուսանողներին թոյլատրված է միտնդներ կազմել առանց ուրիշների մասնակցութեան: Բաղաւորապետը պահանջեց, որ քաղաքային վարչութիւնը յայտարարէ իրան 3 օր առաջ թէ միտնդները որտեղ պէտք է կայանան և ովքեր կը լինեն կարգադրիչները: Վախճանվեց յայտնի գիտնական Ֆիդիօլօ Սեչենի:

ՎԱՐՇԱՎԱ: Գերմանական հիւպատոսարանը ուղարկել է «Վարչապալի կորիւն»-ին, յայտարարութիւն, թէ լեհական զանազան լրագիրներում գետնված լուրը այն մասին, որ Գերմանիան մտադիր է մտցնել իր զօրքերը Լեհաստան և թէ դիվանագիտական բանակցութիւններ են վարվում թագաւորութեան մի քանի մասերը դրաւում մասին, ինչպէս են այն, թէ Գերմանիան ջանացել է ազդել ռուսաց

կառավարութեան վրա լեհական հարցի վերաբերմամբ, հնարովի է:

ՎԻՆՆՈՐ: Որսորդութեան ժամանակ Էդուարդ թագաւորը ընկաւ մի փոս և ոտը դուրս ընկաւ: Թագաւորին խելոյն տարան դղեակը, բայց նա խնդրեց հիւրերին շարունակել որսը: ՊԱՐԻՉ: Ոյսօր առաւօտեան վերսկսեցին աշխատութիւնները Տուլօնի, Բօլֆօրի գինանոցների բոլոր վարպետանոցներում: Գործադուրը վերջացաւ նոյնպէս Բեռլինի, Շէքսօրի և Լօրիանի գինանոցներում:

4 նոյեմբերի

ՄՕՍԿՎԱ, 4 նոյեմբերի: Պօստ-հեռագրական պաշտօնականները ընդհանուր միտնդում որոշվեց դնել միայն տնտեսական նպատակներ: Պետերբուրգ հեռագիր ուղարկվեց, խնդրելով, որ ճանաչվի պօստ-հեռագրական պաշտօնականների գաշակցութիւնը և չը խանգարվի համառակական ժողով գումարելը:

ՄՄՕԼԵՆԱ, 4 նոյեմբ: Դուամն որոշեց հիմնել քաղաքային պահակախումբ: Ընտրված է մի յանձնաժողով, որին իրաւունք է տրված հրաւիրել կամաւորներ այդ պահակի համար:

ՏՕԿԻՈ, 4 նոյեմբ: Առեւտրական աշխարհում ճնշված վիճակ է, որովհետև կարծում են թէ մանջուրական բանակի վերադարձով անգործների թիւը սաստիկ կը շատանայ:

ՎԱՐՇԱՎԱ, 4 նոյեմբերի: Բոլոր գծերի վրա կանոնաւոր հաղորդակցութիւնը վերսկսված է: Գիւղ-հանգանգապետ փակեց «Запад. Голосъ», «Польский Голосъ» և «Новины» լրագիրները: Արգելված է բոլոր վարչապալական լեհ լրագիրների հատով վաճառումը:

ԲԵՐԼԻՆ, 4 նոյեմբ: «Փօս. Յայտ.» լրագրի կարծիքով, այն բոլորը, որոնք չեն ուզում որ Ռուսաստանում քաօսը տիրէ, մի ելք ունեն— օգնել Վիտտէին մանիֆէստի հիման վրա: Մահմանդարականների տատանումներից սաստկանում է երկրում հասարակական կենսի քայքայումը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի: Արդիւնագործութեան բոլոր ճիւղերի ներկայացուցիչների ժողովում քննվում էր 8 ժամեայ բանւորական օրը, որ բանւորներն ուզում են մտցնել յիշափոխական ճանապարհով: Մի քանի արդիւնագործութիւնների ներկայացուցիչները հնարաւոր համարեցին իշխանել բանւորական օրը մինչև 10 ժամի, իսկ միւսներն այդ անհնար համարեցին: Մի քանի մասերում բանւորների հետ դեռ բանակցութիւնները շարունակվում են կամ բանւորները ոչ մի պահանջ չեն դրել: Յամայն դէպս թէ մինչև երկուշաբթի օրը բանւորները գործի չը սկսեն, գործարանատէրերը վճռել են փակել և հաշիւները վերջացնել բանւորների հետ:

ԼՕՆՈՆ, 4 նոյեմբ: «Թայմս» ասում է, որ լիբերալներն անխոհեմ են վարվում, մերժելով օժանդակել Վիտտէին, որն արդէն սկսել է կատարել իր պարտքը, բայց ի հարկէ նա անկարող է միանգամայն անել իր բոլոր ցանկացածը:

ՎԱՐՇԱՎԱ, 4 նոյեմբ: Այսօր ժամանում է Բօսնիական կիւն, որ մեկնելու է Նոյեմբերի 8-ին և հանելու է Պետերբուրգ նոյեմբերի վերջին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնական: Անուանական ուղարկել Կառավարիչ Սէնատին: «Հոկտեմբերի 17-ին մեր հաւանութիւն տուած մտադրութիւնների շարքում ժողովրդի գրութեան թեթեւացման վերաբերմամբ առաջին տեղը պէտք է բռնէ հարկերի ծանր բեռի թեթեւացումը, որ ընկած է գիւղական ազգաբնակչութեան վրա: Գիւղացիների համար ամենաժանրը յետ գնման վճարումներն են: Այդ պատճառով Մենք բարւոք համարեցինք ամենակարճ ժամանակում վերացնել այդ վճարումները նախկին կալուածատէրերի, նախկին արքունական և նախկին պետական գիւղացիների վրայից, պահելով միայն ամենահին և ամենանոր հողերի համար վճարումները: Մշտական հող տանելով սակաւահող գիւղացիութեանը հող մատակարարելու մասին, այժմ և եթ հրամայում ենք, որ գիւղացիական հողային բանկի վրա գրված պարտականութեան աջող կատարման նպատակով այդ բանկին, գիւղացիների հողի քանակը շատացնելու համար, տրվի. 1) ամեն կարիքի համար աւելի գումար հողեր գնելու գիւղացիների համար, 2) այն դէպքերում, երբ հող գնելու համար սակաւահող և անհող գիւղացիներն ուզում են փոխ առնել, տալ այդ փոխառութիւնը լիապէս, ամեն անգամ յատ-

կապէս խնդրելով ֆինանսների և երկրագործութեան միջնորդի հաւանութիւնը, 3) բանկին հասանելի գումարները գործադրել բաց թողնված վկայագրերի պարտքը հազցնելու համար:

ՄՏՄՐՕՐԵՆԼՍԿ, 4 նոյեմբերի: Ջեմսովային ժողովը որոշեց իր յիշատակ հօկտ. 17-ի մանիֆէստի՝ իւրաքանչիւր տարի բաց անել 3-ական դարոյց, կոչելով նրանց Նիկոլայեւի Ուրշովի և Մօսկովա ուղարկել համագնացական ընդհանուր ժողովին մասնակցելու 1 պատգամաւոր և 2 պատգամաւոր գիւղացիներից՝ մասնակցելու գիւղացիական համագումարին: Գիւղացիների մէջ նկատվում է յուզմունք, որն սպառնում է մի քանի տեղերում հողատէրերի տնտեսութիւններին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի: Բաղաւորում ամեն ինչ խաղաղ է: Բանւորները փորձեր անել աշխատելու Նոյեմբ. 3-ին գործադուր արեց հեռախօսը: Պետական առաջին գինահանութիւնը գործում է, իսկ միւսները գործադուր են արել: Կայսերական յանձնապալեայ և ապակեայ գործարանները գործում են: Ֆինանսական և ծարավօւ-Սեօի երկաթուղիները շարունակում են գործել, միւս գծերը չեն բանում: Մօսկովայից գնացքները գալիս են: Կայացաւ հասարակական գործիչների կլուբի առաջին ժողովը: Հաւաքված էին մօտ 600 հոգի: Կրասնովսկին ընտրված է Պետական Դումայի նախագահ: Ժողովը որոշեց պաշտպանել կառավարութիւնը հօկտ. 17-ի մանիֆէստի շրջանում, յանդիմանութիւն յայտնել ներկայ գործադուրի համար՝ դիմելով բանւորներին մի կոչով:

ԲԱՊՕՄ, 5 նոյեմբերի: 4-դ օրն է բանւորները գործադուր են արել: Էլէքտրականութեան փոխարէն վաճվում են խարոյկներ: Ածուխի և նաւթի պաշարները հատել են, փայտ քիչ կայ: Գինեւոր-հանապապետ Բուտակովն արգելեց ժողովներ և գումարումներ: Ժամանեց կօզակների մի դուռը:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆՔԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՆԱ

ԻՍՍՀԱՅ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշիվ. իսկ Թիֆլիսին 58 րոպէ կամ մի ժամ աւելի ուշ պէտք է հաշուել:

	Պօստ.	Մարդ.	Արագ.	Ապր.
Բազուկից դուրս գալը	4.33	12.38	1.18	5.10
Թիֆլիս հասնելը	10.43 առ.	5.51	2.28	11.10
Թիֆլիսից դուրս գալը	11.28	6.39	10...	6.58
(Թիֆլիսի ժամանակով)	12.26	7.37	10.58	7.48
Բաթում հասնելը	12.31	7. 8	8.16	12.42
Բաթումից դուրս գալը	5.55	10. 9	9.33	
Թիֆլիս հասնելը	6.29	10.33	7.39	
Թիֆլիսից դուրս գալը	7.29	11.13	4.59	
(Թիֆլիսի ժամանակով)	8.27	12.11	5.57	
Բազու հասնելը	1.—	4.59	5.48	
Երևանից դուրս գալը	12.35		9.40	
Կարսից »	4.12		1.17	
Ալեքսանդրօպոլ »	7.50		5.26	
Թիֆլիս հասնելը »	5.24 առ.		3.28	
Թիֆլիսից դուրս գալը	11.50 գիշ.		2.50	
(Թիֆլիսի ժամանակով)	42.48 գիշ.		3.48 ց.	
Ալեքսանդրօպ. »	10.50		2.44	
Կարս հասնելը	2.20		6. առ.	
Թիֆլիս »	4.48		3.53	

Հ Ի Ի Ա Ն Գ Ա Ն Ո Ց

ԲՈՒՇԵՆ Ի Ի ԼՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վշտական մահճակալներով:

Երկրավճարական փողոց, 101, տէլեֆօն 1026.

Հիւանդների բնակարանները ամեն օր:

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միդասոսական, (աշուի և սիֆիլիս)

Ի. Ն. ԵՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—լիւին, ներքին հ.

Ի. Ն. ԵՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—լիւին, ներքին հ.

Գ. Ն. ԳԻՄԵՐՈՎ—11—12 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

Ի. Ե. ԱԼԵՔՍԱՆԴՐ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

Գ. Հ. ԹԱԼԵՆԵԱՆ 12—1 ժ. ներքին և երկաթայնց հ.

Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վերաբուժական հ.

Մ. Մ. ԷԼԶԻՆԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի հ.

Գ. Ա. ԲԵՏԵՐ—Երկաթայնց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպոքրով, կատարվում են իրիթմիկական, բակտերիոլոգիական և քիմիական հետազոտութիւններ, նոյնպէս և ծագականութիւն և ստատիստիկ (кормилица) ընտրողութիւն: Բժշկական

